

ISSN 2738-277X


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՈՍՅՈՒՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱՀՈՒԿՅԱՆ ԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

JAHUKYAN READINGS
ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

1(19)

ԵՐԵՎԱՆ - 2023



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE NAMED AFTER H. ACHARYAN

JAHIKYAN READINGS

1 (19)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

1 (19)

Yerevan 2023
Ереван 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 (19)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Գլխավոր խմբագիր՝ Վ.Լ. Կատվալյան
Պատասխանատու քարտուղար՝ Ն.Գ. Հովհաննիսյան

Խմբագրական խորհուրդ

Ա.Վ. Գալստյան, Գ.Կ. Խաչատրյան, Վ.Գ. Համբարձումյան, Լ.Շ. Հովհաննիսյան, Հ.Հ. Մեսրոպյան, Գ.Մ. Մխիթարյան, Ն.Մ. Միմոնյան, Դոնապետյան Անահիտ (Ֆրանսիա), Դում-Թրագուտ Յասմին (Ավստրիա), Պլունգյան Վլադիմիր (Ռուսաստան), Սկալա Անդրեա (Իտալիա), Պ.Ա. Քոչարով (Ռուսաստան)

Editor-in-chief - V.L. Katvalyan

Executive secretary - N.G. Hovhannisyan

Editorial Board

A.V.Galstyan, G.K. Khachatryan, V.G.Hambardzumyan, L.Sh. Hovhannisyan, H.H. Mesropyan, G.M. Mkhitryan, N.M. Simonyan, Donabedian-Demopoulos Anaïd (France), Dum-Tragut Jasmine (Austria), Petr A. Kocharov (Russia), Plungian Vladimir (Russia), Scala Andrea (Italy)

Главный редактор - В.Л. Катвалян

Ответственный секретарь - Н.Г. Оганесян

Редакционная коллегия

А.В. Галстян, Г.К. Хачатрян, В.Г. Амбарцумян, Л.Ш. Оганесян, А.А. Месропян, Г.М. Мхитарян, Н.М. Симонян, Донабедян-Демопулос Анаид (Франция), Дум- Трагут Ясмин (Австрия), Кочаров Петр Александрович (Россия), Плунгян Владимир (Россия), Скалла Андреа (Италия),

DOI: 10.54412/2738277X

ՀՈՂՎԱԾՆԵՐ

CHANGES OF THE DURATION, INTENSITY AND PITCH OF
THE DEFINITE ARTICLE [ə] IN SPOKEN LANGUAGE*

DOI: 10.54412/2738277X-2023.1.19-5

Grigoryan Gayane

PhD in Philology,

Institute of Language after H. Acharyan of NAS RA,
Senior Researcher. gayane.grig.grigoryan@gmail.com

Keywords: definite article, colloquial speech, incorrect accent, intense and prolonged accent.

Introduction

Many linguists have referred to the definite article [ə]. In the Armenian linguistic literature, it is particularly noted that the vowel *ը* [ə], as a rule, does not occur in the stressed syllable, has a weak pronunciation and is mostly not expressed in written speech, forming a reduced syllable. H. Atcharyan writes, "The definite article of Ashkharhabar is [n] or [ə]): the first is attached to the words ending in a vowel, the second - to the words ending in a consonant: ex. *mardə* (the man), *meghun* (the bee), *shunə* (the dog), *hayə* (the Armenian), *partezə* (the garden), *ginin* (the wine), *hovivə* (the shepherd), *arevə* (the sun)"¹.

A. Sukiasyan notes that "in modern Armenian, the stress falls mainly on the last syllable of a word (if its vowel is the [ə], then on the penultimate vowel)"². In another place he writes, "All Armenian vowels can be stressed, except for [ə]. It is stressed only when there is no other vowel in the word, for example: *tə' zz* (interjection) *əhə'* (ya), *ə'st*, (according to), *Msə' r* (a

* Ներկայացվել է 05.05.2023, գրախոսվել՝ 29.05.2023:

¹ **H. Atcharyan**, *Liakatar qerakanutyun hayots lezvi*, (H. Atcharyan, *Universal grammar of Armenian*), vol. 3, Yerevan, 1957, page 984:

² **A. M. Sukiasyan, Q. A. Sukiasyan, M. H. Feleqyan**, *Zhamanakakits hayots lezu (hinchy-unabanutyun, baragitutyun)* (A. M. Sukiasyan, K. A. Sukiasyan, M. H. Felekyan, *Modern Armenian Language (phonetics, lexicology)*, Yerevan, 2017, page 35:

name) etc.³. Speaking about the cases when the last syllable is stressed, the author notes with the first point: "The vowel of the last syllable of the word (open or closed, it doesn't matter) is [ə], for example, *gi' rqa* (the book), *sa'ra* (cold), *a'rkagh* (box), *tsa'nar* (heavy), etc."⁴.

A. Khachatryan writes that "[ə] occupies a special place in the Armenian vowel system. It differs from all other vowels in its limited distribution, it never occurs in stressed syllables, and in that sense, it violates even the stable place of stress in Armenian, because when the word ends in the article [ə], the stress becomes penultimate: compare *varpe't-varpetutyu'n* (master-mastery), but *varpe'ta -varpetutyu'na* (the master, the mastery)"⁵.

Speaking about the nature of Armenian stress, R. Tokhmakhyan states that "Armenian linguists have no disputes, and almost all researchers note the forceful nature of the Armenian stress"⁶. During the research of the stressed article [ə] in oral speech the goal was to confirm or investigate this provision as well.

Experimental and statistical analysis

The subject under discussion is topical and relevant, since the changes in the duration, intensity, and pitch of the article [ə] in the oral speech of the modern Eastern Armenian language are investigated due to a number of factors. For the first time, the relationship between duration and intensity data of article [ə] is presented, clarifying and refining the physical characteristics of the vowel in different phonetic environments. The purpose of the study is to show the undesirable, defective utterance that has appeared in oral speech, which is present in spoken or colloquial speech in recent years. In particular, it talks about the incorrect emphasis, and an attempt is made to understand, explain and justify the causes of this phenomenon. One of the goals is also to find out what the emphasis of the article [ə] is on account of duration, strength or frequency of the pitch, or perhaps a combination of two or three of them.

³ Ibid, page 36.

⁴ Ibid, page 36.

⁵ A. H. Khachatryan, *Zhamanakakits hayereni hinchuytabanutyun*, (A. A. Khachatryan, *Phonology of Modern Armenian*) Yerevan, 1988, page 57:

⁶ R. M. Tokhmakhyan, *Zhamanakakits hayereni sheshtabanutyunə*, (R. M. Tokhmakhyan, *Accentuation of Modern Armenian*) Yerevan, 1983, page 42:

The study did not discuss the words in which the [ə] at the end of the word is not an article (e.g. *kharə* (mixed), *sarə* (cold), *darə* (bitter), as well as the words with syllables called "one and a half" that have an [ə] in the last syllable (e.g. *arkəgh* (box), *tsanər* (heavy)). During the study, the methods of laboratory testing, measurement, statistics, observation and comparison of words were used.

Over the past 2 years, we have collected recordings from several media sources: YouTube interviews, social media sites, television, radio, etc. They are taken from the oral speech of public figures, journalists, political scientists, deputies.

Steps and sequence of the work

We used the following programs while performing the research:

- a) Voice Memos – recording,
- b) Audio conversion - online conversion of MP4 format recordings to WAV or MP3 formats,
- c) Praat – input of recordings into the Praat program, sound analysis (sound demarcation, calculations of duration, intensity and pitch),
- d) Word - writing out and classifying problematic words with article [ə] from sentences,
- e) Excel - data entry, averaging, making tables, calculation.

The audio recordings were analyzed in the Laboratory of Experimental Phonetics named after Amalya Khachatryan of the Department of Applied Linguistics of the Institute of Languages of the National Academy of Sciences of the Republic of Armenia. The purpose of such an analysis and classification of causes is to clarify the reasons and logic of incorrect and unacceptable forms, pronunciation deviations. The obvious changes in the digital data of physical dimensions prove the truth and impartiality of this phenomenon.

According to our research, observations and analysis¹, the following facts can be the reason for the change in the physical parameters.

1. *Unnecessary stress*, when a person wants to emphasize a particular word,

¹ The recordings were also analyzed with the staff of Applied Linguistics Department to find out the main reasons that caused the undesirable changes in stressing the article [ə].

2. *Conjunction*, when a person unnecessarily lengthens the article [ə] to connect the two sentences,

3. *Enumeration*, when the lengthening of the article [ə] is done because of the influence of the enumeration intonation,

4. *Dialectal influence* (this requires further clarification),

5. The so-called *inertial stress*, which is due to the fact that in Armenian the stress is placed on the final syllable (like all words, those with an article [ə] also have the stress on the last syllable),

6. *Other case* (for example, parasitic accent).

Now let's look at some of these points.

When the speaker wants to emphasize a word, to draw more attention to that word, to focus on the target of logic, for some reason, he/she emphasizes the article [ə] in the word. It seems to the speaker that by emphasizing the article [ə], he/she makes the speech more understandable.


It is interesting that the speech that people read does not have articulatory deviations, meanwhile the speech that is improvised, spontaneous, created at a given moment has pronunciation deviations. We can assume from this that we are dealing with a thinking when a person, in order to gain time, makes unnecessary extensions, accents, stretching of sounds.

In the structures *If ... then*, *Not only...but also*, *As for...then*, very often there is a long or stressed pronunciation of the article [ə] when the word with the article appears at the end of the first part of a complex sentence (e.g. *Yete aporini e statsvats guyqə, apa nor apatsutsman bern ənknum e* (If the obtained property is illegal, then a new burden of proof falls...)). In this case, we can talk about the type of a *connection*, when the link between the two components of the complex sentence is carried out by means of intonation, in particular, by unnecessary lengthening or stressing of the article [ə].

According to our observations, another reason for a change in the physical dimensions of articulation is enumeration, when the speaker emphasizes definite articles of enumerated words, thereby creating a tone of enumeration (For example: *Aysinq, mek teghum menq kazmakerpum enq mer patsienti anvtangutyunə, aroghjutyunə yev yerjanik dursgrumə* (That is, in one place we organize our patient's safety, health and happy discharge)).

During our observations, we also discovered another fact. The "abuse" of the duration and intensity of the article [ə] is not only situational or occasional. The individual speech of a person is also of great importance. It is special for a person to speak with stressed article [ə]. In almost 90% of his/her speech, the person lengthens or emphasizes almost all articles [ə], which means that it is the individual speech style of a person.


In our database of recordings, there are even those when the article [ə] is pronounced not as part of a sounding-word, but as a separate sounding-word with a special emphasis and prolonged pronunciation, for example: *Ayd bnakichnerə Hayastani Hanrapetutyān bnakichner en eghel yev mnum en, vorovhetev krum en Hayastani Hanrapetutyān andznagir ə'* (Those residents were and remain residents of the Republic of Armenia, because they have the passport of the Republic of Armenia (the article is pronounced separately with special stress and prolonged duration).



In the phrase *Hayastani Hanrapetutyān andznagirə* (the passport of the Republic of Armenia) the separate image of the articles [ə] is clearly visible.

The data from the experimental phonetic research led to interesting results. While calculating, it was immediately noticed that the duration of the stressed articles [ə] was significantly higher than that of the unstressed [ə] in the speech of the same speaker. The limits of the duration of stressed

articles [ə] are 0.16 - 0.47 m/s. When averaging these data, we get 0.26 m/s. The limits of the unstressed [ə] are 0.04-0.19 m/s, the average is 0.08. The difference between the durations of stressed and unstressed [ə] is 0.18 m/s, and this index is more than 3 times greater than the duration of unstressed [ə]. This clearly expresses the presence of a sustained and stable accent. When comparing individual cases, there was one case when the duration of the stressed [ə] exceeded the duration of the unstressed one by 7 times, but in general the duration of the stressed [ə] exceeded that of the unstressed [ə] by 3 times (27 cases) or 2 times (22 cases). In 12 percent of cases, the ratio of stressed [ə] duration was more than 4, in 9 percent of cases, more than 5.



In the phrase *yev zhoghovurdə... zhoghovurdə ira qvearkutyamb voroshela* (and the people...the people decided by their vote) the difference in the duration of stressed (0.27 m/s) and unstressed (0.06 m/s) [ə] (4.5 times) can be seen in the words *zhoghovurdə* (the people).

As for the intensity and pitch, the same regularity is not observed here as it is in the case of duration. Only in 30 percent of the data the intensity participates in the process of emphasis. The pitch participation is 50 percent. In the rest of cases the emphasis were recorded due to the influence of mainly 2 factors: duration and intensity.

Conclusion

Taking into consideration all these facts, the following conclusions can be made.

1. In colloquial language, the emphasis of the article [ə] is mainly done by duration. The duration of the stressed article [ə] is 3 times greater than the duration of the unstressed [ə].

2. In the case of the stressed article [ə], the forceful accent of Armenian is transformed into a durational accent, because the accentuation is carried out due to the duration, which is confirmed by the numerical values of the duration. This can be explained by the artificiality of the stress, when the speaker utters the article with a prolonged pronunciation, which does not correspond to the normative pronunciation rules of Armenian.

3. The prolonged duration of the article [ə] is typical for oral speech. When pronouncing the written text, the article [ə] is correctly stressed.

4. The reasons for incorrect stressing of the article and thereby changing the physical dimensions are: unnecessary or inertial stressing, ensuring of the connection through the stressing, enumeration, etc.

All recordings are available in the Laboratory of Experimental Phonetics of the Department of Applied Linguistics, and those who wish to listen can familiarize themselves with them, look at phonemes' images, word lists and calculation tables.

Reference Literature

- Atcharyan H., Liakatar qerakanutyun hayots lezvi, Yerevan, 1957.
 Khachatryan A. H., Zhamanakakits hayereni hnchuytabanutyun, Yerevan, 1988.
 Sukiasyan A. M., Sukiasyan Q. A., Feleqyan M. H., Zhamanakakits hayots lezu (hnchyunabanutyun, baragitutyun), Yerevan, 2017.
 Tokhmakhyan R. M., Zhamanakakits hayereni sheshtabanutyunə, Yerevan, 1983.

Գրիգորյան Գայանե - Ը հոդի տևողության, ուժգնության և հիմնական տոնի հաճախականության փոփոխությունները բանավոր խոսքում. - Հոդվածում քննվում են ժամանակակից արևելահայերենի բանավոր խոսքում *ը* հոդի տևողության, ուժգնության և հիմնական տոնի հաճախականության փոփոխությունները՝ պայմանավորված մի շարք գործոնների ազդեցությամբ: Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ բանավոր խոսքում ի հայտ եկած ոչ

ցանկալի, արատավոր հնչողությունը, որն առկա է վերջին տարիներին բանավոր խոսքում: Մասնավորապես խոսվում է սխալ շեշտադրության մասին և փորձ է արվում հասկանալու, պատճառաբանելու և հիմնավորելու տվյալ երևույթի առաջացման պատճառները: Ներկայացվում է ը հոդի տևողության, ուժգնության և հիմնական տոնի հաճախականության տվյալների հարաբարակցությունը՝ պարզաբանելով և ճշտելով ը ձայնավորի ֆիզիկական բնութագրերը հնչյունական տարբեր կառույցներում: Ուսումնասիրման նյութ են եղել վերջին 2 տարիների ընթացքում հավաքած ձայնագրությունները ՁԼՄ-ների մի շարք աղբյուրներից՝ յուրօրյան հարցազրույցներ, համացանցային սոցկայքեր, հեռուստատեսություն, ռադիո և այլն: Դրանք վերցված են հանրային գործիչների, լրագրողների, քաղաքագետների, պատգամավորների բանավոր խոսքից:

Բանալի բառեր. որոշիչ հոդ, բանավոր խոսք, սխալ շեշտադրում, ուժային և տևական շեշտ:

Գրիգորյան Գայանե, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, ավագ գիտաշխատող:

Григорян Гаяне - Изменения длительности, интенсивности и частоты основного тона определенного артикля р [ə] в разговорной речи. - В статье рассматриваются изменения длительности, интенсивности и частоты основного тона определенного артикля р [ə] в устной речи современного восточноармянского языка под влиянием ряда факторов. Цель исследования - показать появившийся в устной речи нежелательное, дефектное произношение, которое выражается в устной речи в последние годы. В частности, речь идет о неправильном акцентировании определенного артикля р [ə]. Автор статьи пытается понять, аргументировать и обосновать причины возникновения этого явления. Представлена корреляция данных длительности, интенсивности и частоты основного тона, что и проясняет и уточняет физические характеристики гласного [ə] в разных фонетических структу-

рах. Материалом исследования послужили записи, собранные за последние 2 года из ряда медиа-источников: интервью на YouTube, социальные сети, интернет, телевидение, радио и др. Они взяты из устной речи общественных деятелей, журналистов, политологов, депутатов.

Ключевые слова: определенный артикль, разговорная речь, неправильный акцент, силовое и длительное ударение.

Григорян Гаяне, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏՍՑԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ*

DOI: 10.54412/2738277X-2023.1.19-14

Խաչատրյան Հասմիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. khachhasmik@yahoo.com

Մկրտումյան Անահիտ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ լաբորանտ, mkrtumyananahit@mail.ru

Սահակյան Նինա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ լաբորանտ, ninsahakyan@mail.ru

Բանալի բառեր. բառաբարդում, բարբառ, փոխառություն, բառակազմություն, բարբառային հայերեն, նկարագրական բառակադապար, հոմանիշ:

Նախաբան

Յուրաքանչյուր բարբառում համընդհանուր գործածական բառապաշարից առանձնանում են բարբառային բառերը, որոնք կարող են հետաքրքրություն առաջացնել իրենց տարածվածության յուրահատկություններով կամ էլ միայն տվյալ բարբառին բնութագրական լինելով:

Մեր նախորդ հրապարակումներում արդեն փաստել ենք, որ բարբառային հայերենի բառապաշարը թե՛ ընդհանուր բնույթի բարբառագիտական աշխատություններում, թե՛ առանձին բարբառային միավորներին նվիրված ուսումնասիրություններում պատշաճ ուշադրության չի արժանացել, չի ենթարկվել համակարգային

* Ներկայացվել է 17.04.2023, գրախոսվել՝ 28.05.2023:

ամբողջական քննության: Այս առիթով ուշագրավ դիտարկում է անում Մ. Ասատրյանը՝ նշելով, որ «Առանձին արժեք և հետաքրքրություն են ներկայացնում այն բառերը, որոնք չեն ավանդված մեր հին մատենագրության մեջ, չկան արդի հայերենում և ոչ էլ նոր փոխառություններ են պարսկերենից, թուրքերենից, արաբերենից, ռուսերենից»¹: Ըստ լեզվաբանի՝ «Հասկանալի է, որ գավառական բառերը մեծագույն մասով հնագույն փոխառություններ են կամ գուցե բնիկ հայերեն (հնդեվրոպական) բառեր, որոնք չեն պահպանվել գրաբարում: Երկու դեպքում էլ դրանք ունեն մեծ արժեք»²:

Այս հոդվածում մեր նպատակն է ներկայացնել Համշենի բարբառի բառապաշարի որոշ առանձնահատկություններ՝ անդրադառնալով հատկապես առավել ուշագրավ բաղադրյալ բառանուններին:

Թեմայի ուսումնասիրության հարցում կարևորում ենք Հ. Աճառյանի «Քննություն Համշենի բարբառի» աշխատությունը, հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերը, ինչպես և Համշենի բարբառին վերաբերող բանահյուսական նմուշներն ու բառարանները: Աշխատանքը կատարելիս մեծապես օգտակար են եղել նաև այն բարբառախոսները, որոնցից բարբառային հարցումներ ենք կատարել:

Կարծում ենք՝ ներկայումս հայ լեզվաբանության արդիական խնդիրներից է բարբառային հայերենի բառապաշարի ամբողջական և համակողմանի ուսումնասիրությունը: Թեման արդիական է, քանի որ ժամանակն է գիտականորեն առավել հանգամանալից անդրադառնալու Համշենի բարբառի բառակազմությանը: Առաջին անգամ փորձ է արվում քննելու սույն բարբառի որոշ բաղադրյալ կազմությունների իմաստային դրսևորումները:

Հետազոտությունն իրականացվել է լեզվաբանության մեջ կիրառվող համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

¹ Մ. Ասատրյան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962, էջ 145:

² Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 146:

Բառակազմական դիտարկումներ

Ինչպես այլ, այնպես էլ Համշենի բարբառում բառակազմական յուրահատկությունները բազմազան են. դրանք դրսևորվում են բաղադրիչների հոմանիշային, շարադասական տարբերություններով, նաև ածանցման զանազանություններով:

Համշենի բարբառում առանձնացրել ենք բառանունների հոմանիշային որոշ տարբերակներ: Այսպես՝ «չղջիկ» հասկացության բառային դրսևորումների նրբիմաստներն արտացոլված են ինչպես *կաշի*, այնպես էլ նրան հոմանիշ *մաշկ*, *սեկ* արմատներով բաղադրված ինքնատիպ բառանուններով: Վանի բարբառում, օրինակ, այն դրսևորված է *կաշաթև* բառանվամբ³, այսինքն՝ «կաշվե թև ունեցող թռչուն», Սվեդիայում, Եվդոկիայում «չղջիկ» հասկացության նշանակիչը *սեկեմուկ*⁴ բարբառային բառանունն է, որը բաղադրված է *կաշի* բառի *սեկ* հոմանիշով և *մուկ* արմատով: Հիշյալ թռչունը բարբառային հայերենում դրսևորված է նաև *մաշկ* և *թեկ* բաղադրիչներից ձևավորված *մաշկաթեկ* բառանվամբ, որը Արեշում, Հավարիկում հանդես է գալիս *մաշկաթուլա*, իսկ Խոտրջուրում՝ *մաշկընթեկ*, *մաշկթեկի* գուգաբանություններով⁵:

Փաստենք, որ *մաշկաթեկ* բառանունը վկայված է նաև Համշենում *մաշկընթեկ*, *մաշկօն թեկ*, *մաշկեթեկ* և *մաշքեթափ* բարբառային տարբերակներով: Օրինակ՝ *Մաշկընթեկը* մրզօն գեվդսն ունի, հաֆքի թեկ, անդու հումար ալ գօր ան իմընուշը՝ ըն մու՞գ ան, տան՞ հաֆք⁶ (Չղջիկը մկան մարմին ունի, հավքի թև, դրա համար էլ դժվար է իմանալը. նա մու՞կ է, թե՞ թռչուն), *Մաշկօն թեկը* մըտօնը

³ **Հ. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու* (այսուհետև՝ ՀԳԲ), հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 549:

⁴ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ., Ե., 2008, էջ 297:

⁵ ՀԼԲԲ, հ. Դ, Ե., 2007, էջ 26-27:

⁶ **Հ. Աճառյան**, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետև՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 213:

Ֆրոռա գու⁷ (Չղջիկը մթին թռչում է), *Մաշկէթափնիյէ* մութի մէշ թէփթէփա գուն⁸ (Չղջիկները մթին թռչում են): Ի դեպ, ըստ Հ. Աճառյանի՝ Վեցօրյայում դեռևս 1830 թ. հիշատակված է *մաշկաթև* բառը, որ նշանակում է «մաշկեայ թև ունեցող» և գործածվում է որպես *չղջիկի* ածական, այնուհետև գոյականի վերածվելով՝ նշանակել է հենց «չղջիկ»⁹:

Հարկ է նշել, որ Համշենի բարբառի խոսվածքներում «չղջիկ» հասկացությունը դրսևորված է նաև նկարագրական բնութագիր ներկայացնող այլ՝ ոչ պակաս ուշագրավ բաղադրություններով, ինչպիսիք են՝ *կիշէրամուգ*-ը, *մուգջինջուխկ*-ը (մուկճնճողուկ), *կիշէրֆըռուգ*-ը (գիշերը թռչող), *կիշէրֆըռիճ*-ը և *չըխճիգ*-ը¹⁰: Օրինակ՝ *Մուգջինջուխկնին* մըտօնը ֆըռօն գու (Չղջիկները մթին թռչում են), *Կիշէրֆըռիճնին* մուտ դէղը ֆըռօն գու: Կարծում ենք՝ *չըխճիգ* բառի առկայությունը բարբառի որոշ խոսվածքներում պայմանավորված է գրական լեզվի ազդեցությամբ:

Մաշկամիրգ՝ մաշմուրք: Համշենի բարբառը շարունակ զարմացնում է մեզ իր յուրօրինակ աշխարհընկալմամբ ու պատկերավոր լեզվամտածողությամբ ձևավորված ինքնատիպ բառանուններով: Բարբառում *մաշկ* բաղադրիչով ձևավորված է ոչ միայն «չղջիկ» հասկացության *մաշկընթէվ* բառանունը, այլև այն հանդես է գալիս մեկ ուրիշ ուշագրավ բառանվան կազմում: Այսպես՝ որպեսզի «շագանակ» հասկացության բառիմաստն ավելի ընկալելի լինի, համշենահայերը ստեղծել են *մաշմուրք* բառանունը, որը, ըստ Հ. Աճառյանի, բնորոշ է միայն Համշենի բարբառին: *Մաշմուրք* բարբառային բառանունը բաղադրված է նկարագրական *մաշկ + ա*

⁷ Տե՛ս լեզվի ինստիտուտի արխիվ, Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր հավաքման ծրագրով արված գրանցումներ (այսուհետև՝ ԼԻ արխիվ) տետրեր հ.հ. 39, 410:

⁸ Ս. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը* (այսուհետև՝ ՎՀԲԲԵ), Ե., 2009, էջ 105:

⁹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1977, էջ 261:

¹⁰ Տե՛ս ԼԻ արխիվ, տետրեր հ. 336, 252, 52, 39, 187, 94:

+ *միրգ* բառակաղապարով: Այսինքն՝ շագանակը մաշկ ունեցող միրգն է: Օրինակ՝ Սարը կընծակ *մաշմուրկ* ժողվուշ (Գնացինք անտառ՝ շագանակ հավաքելու):

Ճօմբուն ափուն մաշմուրգի,
 Էսմօն է բօնն աշխրրքի,
 Մաշմուրգին օմուր գէրօն,
 Դուք մի էլլիլ պաճբէրօն,
 Տօնը միժ գէրօնը՝ ես,
 Դուն էլ ինծի հայս կըլլիս¹¹:

Մաշմուրք բառից էլ բարբառում բաղադրված են *մաշմըրքի*՝ «շագանակի ծառ», *մաշմըրքուղ*՝ «շագանակենիների անտառ» բառանունները¹²: *Մաշմրկէժը* (*մաշմրկի*, սեռ՝ *մաշմրկէժը*) փանդը չէր (չոր) ըլլի նա, խաս դակծընս գու՝ Եթէ շագանակենու փայտը չոր լինի, լավ կտաքացնի:

Գ. Զահուկյանը *մաշկ*-ը համարում է սեմական փոխառություն (հմմտ. ակկադ. *mašk*, արամ. *maška*, ասոր. *meškā*) և նրանից կազմված բաղադրությունների մեջ հիշատակում է նաև *մաշկա-միրգ* բառը¹³: Հ. Զաքարյանի կարծիքով, սակայն, մի քանի հանգամանք «հարկադրում են կասկածի տակ առնելու» այս ստուգաբանությունը, և ըստ նրա՝ «հայերենում առկա են «կաշի» և «ոտնաման» նշանակող հնդեվրոպական ծագման ոչ փոխառյալ մի շարք բառեր՝ հակառակ մինչև այժմ իշխող տեսակետի: Դրանք են՝ կաշի, սեկ, մաշկ...»¹⁴: Լեզվաբանը եզրակացնում է, որ *մաշ-* արմատից *-իկ* ածանցով առաջացել է *մաշիկ* բառը, *-կ* աճականով՝ *մաշկ* բառը՝ հ.-ե. *ma(i)s-g-՝ *maiso-s-/*moiso-s- «ոչխար, ծածկել, կաշվե»

¹¹ Բ. Թողաթյան, *Նշխարներ Համլենի և Տրապիզոնի բանահյուսության*, Ե., 1986, էջ 107:

¹² ՔՀԲ, էջ 177:

¹³ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010, էջ 510:

¹⁴ Հ. Զաքարյան, «Ոտնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն, «Զահուկյանական ընթերցումներ», Ե., 2015, էջ 53-60:

(Պոկոռնի) նախաձևից՝ այդ անցումը համեմատելով սլավոնական լեզուներում *коза>козья>кожа* անցման հետ: Նա որպես կարևոր փաստարկ է բերում նաև հանրայթային «կաշի- ոտնաման» իմաստային անցումն ու արմատային նույնությունը, որի դրսևորումներից են՝ հայ. *կաշի* – *կօշիկ*, *մաշկ* – *մաշիկ*, *մորթի* – *մոյկ*, *տեռել* «մաշկել» – *տրեխ*, *լեկ* «1. մշակված կաշի, 2. տրեխ», *փոկ* «1. կաշվի շերտ, 2. տրեխ», *օղենի* «ոչխարի մորթի» և *օղ* «ոտնաման», իսլ. *skjall* «կաշի» – *skor* «կոշիկ», իռլ. *skūr* «կաշի» – *cūarān* «կոշիկ», գոթ. *skauda* «1. կաշի, 2. կոշիկ» և այլն:

Որոշ բարբառներում գործածվող «լոբի» հասկացության *մաշ* բարբառային անվանումը կարող է շփոթության առիթ տալ աղերսներ ենթադրելով *մաշկ* բառի հետ: Ըստ Մալխասյանցի՝ *մաշ*-ը փոխառություն է պարսկերենից՝ *māš*, սանսկրիտերեն *māśa*՝ լոբի, քրդ.՝ *māš*՝ ոսպ, բակլա¹⁵: Փաստենք, սակայն, որ *մաշկ*-ը Ոգմի բարբառում «լոբու կձեպ» է նշանակում¹⁶, իսկ Մալաթիայում էլ արձանագրված է *մաշկ* բառի «ընդեղեն» նշանակությունը¹⁷: Այս օրինակները թերևս սապացուցում, որ *մաշմուրք* բառանունը որևէ առնչություն չունի «լոբի» նշանակությամբ *մաշ* պարսկական փոխառության հետ, և այն ծագումնաբանորեն ուղղակիորեն աղերսվում է հայերեն *մաշկ* բառի հետ: Կարծում ենք՝ բարբառային հայերենում գործածվող թուրքերենից փոխառյալ *մուշմուլլա*-ն՝ «զկեռ» իմաստով, ևս աղերսներ չունի *մաշմուրք* բառանվան հետ:

Հարկ է փաստել, որ բարբառների բառակազմական յուրահատկությունների բազմազանությունը կարող է դրսևորվել նույնիսկ նույն բարբառի տարբեր խոսվածքներում: Օրինակ՝ Համշենի բարբառում «*փայտփորիկ*» հասկացությունը դրսևորված է հետևյալ հոմանիշ կազմություններով՝ *ձառձրկօն* (ծառ + ծակող), *ծառկօտկօտ*¹⁸, *քրթքրթիչ*: Օրինակ՝ *Ձառձրկօնը* քրտխսն գու ձառը (Փայտ-

¹⁵ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 2010, էջ 258:

¹⁶ ՀԱԲ, հ. 3, էջ 260:

¹⁷ ՀԼԲԲ, հ. Դ, Ե., 2007, էջ 26:

¹⁸ Բ. Թողաքյան, *նշվ. աշխ.*, էջ 226:

փորհիլը կտցահարում է ծառը), *Քրթքրթիչը* փորն գու ձառը¹⁹ (Փայտփորհիլը փորում է ծառը): Բարբառում գործածական են նաև *փայտփորհիկ* բառի *փնդփորիչ*, *փնդփորիգ*, *փաղբորի* գուգաբանությունները (*Փնդփորիչը* քրթքրթացնա գու ձարը, *Փաղբորին* ձառին գուտտա՝ կտցահարում է)²⁰: Համշենահայերի խոսվածքներում ավելի կենսունակ է «*փայտփորհիկ*» հասկացության *ձրկօն* (նաև՝ *ձրքօն* հնչածնով) վերջածանցավոր բառը²¹ (*Ձրկօնը* ձառը փորէ գու): *Ձրկօն*-ը *ծակ* արմատով և *ան>օն* վերջածանցով ձևավորված բառանուն է՝ *ծական*, այսինքն՝ «ծակող» իմաստով:

Յուրահատուկ աշխարհընկալմամբ պայմանավորված՝ սույն բարբառում առկա են նաև համադրական բարդությունների ինքնատիպ նմուշներ: Այսպես՝ բարբառի յուրօրինակ լեզվամտածողությունը դրսևորված է *հոտ* և *համ* բառերից ձևավորված բարդություններում, որի մասին ուշագրավ դիտարկում է անում նաև Հ. Աճառյանը²²: Բարբառում տարբերակված են «լավ» և «վատ» հոտերը: *Հոտ* բառով արտահայտվում են միայն «վատ» հոտերը՝ գարշահոտերը, ինչպես, օրինակ, *ծրգօնհեղ*, *ձովահեղ*, *թըսահեղ*, *շընահեղ* և այլն (Հուգայրն *ծրգօնհեղ* կուկա՝ Այստեղից վատ ձկան հոտ է գալիս): «Լավ» հոտերի բուրմունքի համար էլ գործածում են *համ* (բարբառին բնորոշ հնչյունափոխությամբ համ>հոմ) բառը, որը նաև իր բուն «համ, ճաշակ» իմաստով է կիրառվում: Օրինակ՝ Ուղեխիլին *հոմը* քինտըս տըվվավ (Ուտեխիլի հոտը քիթս ընկավ): Իսա վառտը օնուշ *հոմ* գուդա (Այս վարդը անուշ հոտ ունի): *Հօմ* դըվօղ ձաղիգ (հոտավետ ձաղիկ):

Մամ: Մանկական կամ փաղաքշական բնույթի հնդեվրոպական արմատ համարվող *մամ*²³ բաղադրիչով են ձևավորված *հմր*-

¹⁹ Տե՛ս *ԼՐ արխիվ*, տետրեր հհ. 336, 94:

²⁰ *ԼՐ արխիվ*, տետրեր հհ. 52, 94: *ԿՀԲԲԵ*, էջ 107:

²¹ *ԼՐ արխիվ*, տետրեր հհ. 252, 410:

²² ՔՀԲ, էջ 176:

²³ **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Ե., 1987, էջ 276:

մօւ, *մւնրմօւ* և *մօւմնր* իսկական բարդությունները: Համշենի խոսվածքներում *մաւ*-ը ներկայանում է բարբառին բնորոշ *մ* ռնգայինից առաջ *ա>օ* հնչյունափոխությամբ (*մաւ*>*մօւ*):

Հայերենի բարբառներում երբեմն տարբերակվել են հայրական և մայրական կողմի տատերն ու պապերը, և այդ իմաստներն արտահայտելու համար ստեղծվել են յուրօրինակ նկարագրական բառանուններ: Օրինակ՝ «*մայրական տատ*» իմաստով Վանում գործածվել է *քեռմամա*-ն, Մարաշում՝ *քարմար*-ը՝ ձևավորված *քեռի* + *մամա*, *քեռի* + *մայր* կաղապարներով, որոնցում, ինչպես նկատելի է, մայրական տատը օտարվում է որպես «քեռու մայր»:

Այս ինքնատիպ լեզվամտածողությունը դրսևորված է նաև Համշենի բարբառում գործածվող *հւնրմօւ*, *մւնրմօւ*, *հւնրբաբ*, *մւնրբաբ* բառերում: *Հւնրմօւ*-ը և *հւնրբաբ*-ը հայրական կողմի տատն ու պապն են, իսկ *մւնրմօւ*-ն ու *մւնրբաբ*-ը՝ մայրական²⁴:

Ուշագրավ է նաև «*հորեղբոր կին*» իմաստով բարբառում գործածվող *մօւմնր* բառանունը: Օրինակ՝ *Մօւմնյս* սօն դարի տըբոծին պօնաձ ւն (Հորեղբորս կինը քսան տարի դպրոցում է աշխատել): Հ. Աճառյանը, անդրադառնալով *մօւմնր*-ին, գրում է, որ բառի ծագումն իրեն անհայտ է, բայց, «անշուշտ, *մայր* բառից է, որովհետև սեռականը լինում է *մօւօր*»²⁵: Մենք կարծում ենք, սակայն, որ այս բառի *ռ* ներքին հոլովման պատկանելը *հօրպւնր* բառի՝ սեռական հոլովում *հօրպօր*-ի ազդեցությամբ է պայմանավորված: Ինչպես հայտնի է, Համշենի բարբառում *հորեղբայր* բառը դրսևորված է *հօրպւնր* հնչաձևով, որում *եղբայր* արմատը համառոտվել է՝ պահպանելով միայն վերջին վանկը՝ *եղբայր*>*պւնր*: Կարծում ենք՝ *մօւմնր* բառանունը ձևավորվել է *հօրպւնր* բառի համաբանությամբ: Այսինքն՝ թերևս *մօւմնր* բառում ունենք *մաւ* բառի՝ Համշենին բնո-

²⁴ ՔՀԲ, էջ 262-263:

²⁵ ՔՀԲ, 176:

րոշ *մօմ* հնչատարբերակը, որին կցվել է *եղբայր* արմատի համառոտված *ւնր* բաղադրիչը: Կարծում ենք՝ *մօմւնր* բառը արտակարգ հնչյունափոխության բացառիկ օրինակներից է: «Արտակարգ հրնչյունափոխությունը ունի հոգեբանական հիմունք. երբեմն երկար բառը կամենում ենք կարճացնել շուտ ավարտելու համար, երբեմն բառը լրիվ արտաբերելու կարիք չի լինում»²⁶: Գուցեն *մօմւնր*-ը՝ որպես «հորեղբոր կին», *մայր հորեղբայր* կաղապարով ձևավորված բառանուն է, մանավանդ որ բարբառային հայերենում նմանատիպ օրինակներ կան: Այդպիսիք են, օրինակ, Թիֆլիսի բարբառում՝ *աղջիկ պարոն*-ը՝ «տիկին» իմաստով, Մարաշում և Հաջընում՝ *բարմար*-ը (այսինքն՝ պարոն մայր)՝ «սկեսուր և գոքանչ» իմաստներով:

Համշենի բարբառի բանահյուսական նյութերում և բառարաններում արձանագրված են «մասուր» հասկացության *ճաղվի լիլիգ*, այսինքն՝ «ջաղուի՝ պառավի լիլիգ», «ալոճ»-ի համար՝ *մօմու լիլիգ* (տատի, պառավի լիլիգ), «հավի հատապտուղ»-ի համար՝ *հավու լիլիգ* ինքնատիպ ու ուշագրավ կայուն բառակապակցությունները²⁷: Օրինակ՝ Միր սարին ըմբն ինձ ալ պուսնի գու՝ ալ *ճաղվի լիլիգ*, ալ *հավու լիլիգ*, ալ *մօմու լիլիգ*, ալ *օծօն լիլիգ* (Մեր անտառում ամեն ինչ էլ բուսնում է՝ և՛ մասուր, և՛ ալոճ, և՛ հավի հատապտուղ, և՛ օձի հատապտուղ):

Ըստ Հ.Աճառյանի՝ *լիլիգ*-ը վայրի թփերի և ծառերի մանր պլտուղն է, օրինակ՝ *գհիհի լիլիգ*²⁸, *ճաղվի լիլիգի պուլկ*²⁹, այսինքն՝ «մասուրի թուփ»: Ձառեցը վրբըն քօնի մը *լիլիգ* գար³⁰ (Ծառերի վրա մի քանի պտուղ կար): Հարկ է փաստել, որ, ըստ մեր բարբառախոսների, *լիլիգ* բարբառային բառանունը Համշենի բարբառում

²⁶ Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, *Հայոց լեզու*, մաս 1, Ա. պըրակ, Ե., 1980, էջ 160-161:

²⁷ Խ. Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան* (այսուհետև՝ ՋԲԲ), Սոչի, 2014, էջ 91: Հ. Գուրունյան, *Համշենահայ բանահյուսություն*, Ե., 1991, էջ 323:

²⁸ ՀԳԲ, էջ 423:

²⁹ ՋԲԲ, էջ 133:

³⁰ ՀԼԲԲ, հ. Բ, Ե., 2002, էջ 226:

դրսևորված է ոչ միայն «հատապտուղ», այլև «խաղալիք» նշանակությամբ (Խաղող բաշ անիր նսն՝ *լիլիգնիդ* ժողվմն՝ Խաղող ավարտեցիր՝ խաղալիքներդ հավաքի՛ր): Ի հավելումն ասենք, որ *լիլիգ*-ից բացի՝ Համշենի բարբառում առկա է նաև «խաղալիք» հասկացության *խաղզընէլիկ* բառանունը:

Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ բարբառային հայերենում առկա են *լուլիկ*, *լիլիկ*, *լոլոկ*, *լոլո* բառանունները, որոնք գրեթե նույն՝ «որևէ կլոր բան, հատկապես կլոր պտուղ, միրգ (նաև այլ իր, որ տալիս են երեխային խաղալու համար)» նշանակությամբ են գործածվում: Այսպես՝ *լոլոկ*՝ Արարատ, Ղարաբաղ՝ «միրգ, որ տալիս են երեխայի ձեռքը նրան լեցնելու, համոզելու համար», *լուլիկ*՝ Արաբկիր՝ «ընկուզենու առաջին պտուղը, որը մեծ մասամբ սևանում, թափվում է», *լոլիկ*՝ Խարբերդ՝ «փշատ», *լոլիկ*՝ «պոմիդոր» նշանակությամբ՝ Պոլիս, Խարբերդ, Մեքաստիս³¹: Բարբառային *լուլիկը*, այս վերջին իմաստով, ինչպես գիտենք, հարստացրել է գրական հայերենի բառապաշարը: Հավելենք նաև, որ այլ բարբառներում ևս գործառում են *լուլիկ*, *լիլիկ*, *լոլոկ* բառերից ձևավորված բաղադրություններ, օրինակ՝ *հավլոլո* (կարմիր փոքր ալոճ)՝ Արարատ, *հավալոլոգ* (ազնվամորու համով բալանման հատապտուղ)³²՝ Նախիջևանի Ազնաբերդ, *հավլիլիկ* (խաղողի այն ողկույզը, որը շատ մանր հատիկներ է ունենում)՝ Խոտրջուր և այլն:

Համշենի բարբառի համադրական բարդություններից ուշադրության է արժանի նաև *օմբոէդ* բառանունը, որը ձևավորված է *ամպի որոտում*՝ հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունից, որում տեղի է ունեցել *որոտում* բառի բառասկզբի *ո* հնչյունի սղում: Ըստ Հ.Աճառյանի՝ Համշենի բարբառի «ձայնաբանական օրենքներով» *ամպորոտ*-ը դառնում է *օմբոէդ*, որը գործածում է միջին սերունդը, իսկ նոր սերունդը, ավելի ամփոփելով և համառոտելով *ամպորոտ* բառը, դարձրել է *օմոէդ*³³: Օրինակ՝ Էրեզ շաղ վըրըյեզ

³¹ ՀԼԲԲ, հ. Բ, էջ 226-227, 239:

³² Ա. Վարդանյան, *Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները*, Ե., 2022, էջ 26:

³³ ՔՀԲ, էջ 70, 177:

անրավ, *օմբոնդ* կօռաձ, գնագորոտէձ, էոնիկը քադոէձավ, գարգըդուշ կընձաձ էլը (Երեկ շատ անձըն եկավ, ամպորոտը գոռաց, կայծակեց, երկինքը պատովեց, գնացել էի կարկատելու):

Առանձնապես հետաքրքիր է *սարդոստայն* կցական բարդության՝ Համշենի բարբառի *գայտպուն* (այսինքն՝ սարդի բույն) գուգաբանությունը, որում, ինչպես նկատելի է, բառասկզբի ս>զ, իսկ պայթական ու կիսաշփական հնչյուններից առաջ գտնվող *ր*-ի դիմաց առկա է բարբառին բնորոշ ձայնորդ *յ* (սարդ>գայտ), այսինքն՝ սարդի բույնը՝ *գայտպուն*: Օրինակ՝ Դունը *գայտպունը* փատտաձ ունի (Տունը սարդոստայնը բռնել է):

Համշենի բառապաշարը մեծապես հետաքրքիր է նաև իմաստաբանական առումով: Բարբառում նկատելի են իրողությունների նկարագրական բնութագիր ներկայացնող բաղադրություններ, որոնք ըստ անհրաժեշտության՝ ճշգրիտ նկարագրական անվանումներ են հատկացուցիչ-հատկացյալի, որոշիչ-որոշյալի համադրությամբ: Արևմտյան որոշ բարբառների նման (Քեսաբ, Սվեդիա) Համշենի բարբառում ևս գրաբարյան *քեռայր* կաղապարի համաբանությամբ «հորաքրոջ ամուսին», «մորաքրոջ ամուսին» հասկացությունների համար ստեղծվել են *այր* (տղամարդ) արմատի (*ար* հընչաձնով) եռակի միջնորդավորվաձ *հօրկուրար*, *մօրկուրար* բառանունները: Հ. Աձառյանը Համշենի բարբառում արձանագրել է նաև բնիկ հնդեվրոպական արմատներից ձևավորվաձ ուշագրավ մեկ այլ բառանուն՝ *դալար*-ը (*տալ* + *այր*)՝ որպես «տալոջ ամուսին» հասկացության բառանուն³⁴:

Մայրօմիգ, մայրօմի ջիջու: Ըստ ՀԲԱ ծրագրի հավաքաձ նյութերի՝ Համշենի բարբառում *գատիկ միջատ* հասկացությունը դրսևվորվաձ է հիմնականում *գատիկ* (կամ *գատկի բըլօձ*) բառանվամբ: (*Ձադիգը* գարմիր հնու բուդբուդիգ գըլի): Համշենի Օրդուի խոսվաձքում էլ վկայվաձ է *Ֆրոաջըջու*-ն (*Ֆրոաջըջուն* գարմիր, բուդբուդիգ բիջիգ պօն ան՝ Ձատիկը կարմիր, պուտավոր փոքրիկ բան

³⁴ ՔՀԲ, էջ 254:

է): Մեր բարբառախոսները հիշեցին նաև հետևյալ մանկական խաղիկը՝ *Ֆրոաջըջո՛ւ, Ֆրոաջըջո՛ւ*, բաբուս, մոմուս կըղալ մը ճո՛ւյ դուր, այսինքն՝ Զատի՛կ, գատի՛կ, տատիս, պապիս մի գդալ ջո՛ւր տուր: Հարկ է փաստել, որ *ֆրոալ* բայանունը Համշենի բարբառում «թոշել» է նշանակում, այսինքն՝ *ֆրոաջըջո*-ն «թոշող ճիճուն» է: Ունիեի Բալլուդ գյուղի խոսվածքում, սակայն, արձանագրվել են բավականին ուշագրավ *մայրումիգ, մայրումի ցիջու* բառանունները: Օրինակ՝ *Մայրումի ցիջու* մը նըստավ ձաղիգին վըրըն: *Մայրումի ցիջուն* մայսին փէս կէլլա՛մ (Զատիկը մայիսին է երևում): Նկատենք, որ վերջիններս վկայված չեն ո՛չ Հ.Աճառյանի, ո՛չ էլ որևէ այլ ուսումնասիրողի կողմից: Հ.Աճառյանը ՀԳԲ-ում *գատիկ* միջատի համար գրում է. «Ճանճի մը մեծութեամբ կարմիր ճճի մ'է, որ գատկին մօտ կերևայ», և բերում է գատիկ հասկացության *Աստծու կով, եզնակ, գատկի պղոճ* բարբառային բառանունները³⁵:

Կարծում ենք՝ Համշենի բարբառում վկայված *մայրումիգ* (մարիամիկ), *մայրումի ցիջու* (Մարիամի ճիճու) բառանունները աղերսներ ունեն Աստվածամոր՝ Մարիամի անվան հետ. գատիկ միջատը հայտնվում է գարնանը՝ ապրիլին, որը նաև Աստվածամոր ավետման ամիսն է: Որոշակիորեն ենթադրելի է, որ *Մարիամի ճիճու*-ն *գատիկ* հասկացության փոխաբերացմամբ ձևավորված բառանուն է: Ի հավելումն նշենք, որ «Հոմանիշների բացատրական բառարան»-ում բացի *աստծու եզն, աստծու կով, աստծու եզնակ, չալ-պղոճ* բառանուններից, որպես *գատիկ* հասկացության հոմանիշ է հիշատակվում նաև *մարիամ բոլոջ* բառանունը³⁶:

Համշենի բարբառում գործառող բառերից ուշագրավ է գրաբարյան *առ* նախդրով *առընկօխ* բառանունը, որը ըստ Ս. Վարդանյանի, կրոնափոխ համշենահայերը *արենգօխ* հնչատարբերակով գործածում են որպես «սարալանջով անցնող ճանապարհ»³⁷,

³⁵ ՀԳԲ, էջ 316:

³⁶ Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, էջ 295:

³⁷ ԿՀԲԲԵ, էջ 275:

իսկ ըստ Բ. Թոռլաքյանի՝ այն գործառուում է «թեք, ծուռ» նշանակությամբ, նաև՝ որպես «խարդախ մարդ»³⁸: Մեր բարբառախոսների վկայությամբ, սակայն, *առընգէղ*-ը գործածվում է «հակառակ ուղղությամբ» իմաստով: Օրինակ՝ Իլլա՝ առընգէղ էշտա բիդի ալայնուն՝ Պարտադիր բոլորին պիտի հակառակվի: Հ. Աճառյանը ևս հիշատակում է այս բառը (*առընգէղ*), բայց բացատրությունը չի տալիս³⁹:

Համշենի բարբառում ուշադրության են արժանի նաև *վի-րարու*, *հիդրար* բաղադրությունները⁴⁰, որոնցում կապային կառույցները (իրար վրա, իրար հետ) բարբառախոս միջավայրում արագաբանությամբ կրճատվել և բաղադրյալ բառի արժեք են ձեռք բերել (Էսօր յէս գէշտօմ ցախօտը փէտ պէրուշ, Քինօսն օր գա, դըրկէ քօվս, *հիդրար* մէյմէկ շալակ փէտ պէրինք գու)⁴¹: Հարկ է փաստել, որ *հիդրար*-ը *հիտրաց* (նաև՝ *ի հիտրաց*) տարբերակով «իրար հետ, միասին» նշանակությամբ վկայված է «Միջին հայերենի բառարան»-ում (Լուսինն ի սարէն փրթաւ, ինքն ու իւր աստղն ի հիտրաց)⁴²: Այն թերևս բարբառին է անցել միջին հայերենից:

Համշենի բառապաշարի յուրահատկություններից է որոշ հասկացությունների ոչ հայտնի կամ սակավ հայտնի բառանուններով գործածությունը: Այսպես՝ *վրա* կապով բարբառում արձանագրված են *վըրահագ* և *վըրայընէծ* բառանունները: *Վըրահագ*-ը գործածվում է որպես «կանանց վրայի հագուստ» հասկացության նշանակելի (*Վըրահագը* հօնիծ նէդիծ, շապկին թիվէրը վիր ձալիծ)⁴³, իսկ *վըրայընէծ*-ը (կազմված վրա+անոց բաղադրիչներից)՝ «վերարկու»⁴⁴:

³⁸ Բ. Թոռլաքյան, նշվ. աշխ., էջ 214:

³⁹ ՔՀԲ, էջ 221:

⁴⁰ ՔՀԲ, էջ 70, 168:

⁴¹ Բ. Թոռլաքյան, նշվ. աշխ., էջ 44:

⁴² Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 428:

⁴³ Բ. Թոռլաքյան, նշվ. աշխ., էջ 35, 238:

⁴⁴ ՔՀԲ, էջ 182:

Ուսումնասիրվող բարբառում դիտարկել ենք ևս մեկ ուշագրավ բառանուն. *քնատ* հասկացությունը համշենահայերի շրջանում դրսևորված է *քընախեծ* (քնախոց) բառանվամբ: Այսինքն՝ քնատ մարդը, համշենցիների ինքնատիպ լեզվամտածողությամբ պայմանավորված, արտահայտված է *քնել* և *խոց* ձևայիններից բաղադրված *քնախոց* բառի *քընախեծ* հնչատարբերակով⁴⁵: Օրինակ՝ *Քընախեծ* ըլլուշըն դըդըն վիրա վնյն գու (Քնատ լինելու պատճառով երեխան անընդհատ լաց էր լինում):

Համշենի բարբառի բառապաշարի կարևոր յուրահատկություններից է նաև բառերի գործածությունը ոչ հայտնի իմաստներով: Ինչպես գիտենք, *շենք* բառանունը գրական հայերենում «շինություն, տուն» իմաստով է գործառնում: Բարբառային հայերենում (Ար., ՆԲ, Մշ, Վն), սակայն, գործածվում է *շենք*-ից բաղադրված *շենքել* բայանունը՝ «Թոնրի կամ վառարանի մեջ աթար կամ փայտ դարսել վառելու համար» իմաստով, օրինակ՝ Դու յավաշ-յավաշ թօնիր *շենքի*, ինոնք կէլնէն (Գ. Մհ.), Նանաս թօնդիրը *շենքեց*, յետօվ խըմօրը կընտէց (Բնվ.)⁴⁶:

Բարբառային բառերը հաճախ ներկայացնում են խոսողների՝ իրականության ընկալման յուրահատկությունը: Դրա վառ օրինակն է Համշենի բարբառի *շենք* բառանունը, որ այսօր էլ գործածվում է «ձեռագործ, ասեղնագործություն» նշանակությամբ, ինչպես և նրանից բաղադրված *շենկ շինուշ* հարադրությունը՝ *ասեղնագործել* իմաստով⁴⁷ (Հայսընծուն նըստաձ *շենկ շինէր* գու՝ Հարսնացուն նստած ասեղնագործում էր):

Համշենի բարբառակիր հանրության պատկերավոր մտածողությունը դրսևորված է նաև *բասմուղ*, *բասը ուղուշ*, *նէսնրեծկ* բառանուններով: *Բասմուղ*-ը պահք (բաս) և մտնել (մուտ) բաղադրիչներից ձևավորված համադրական բարդություն է՝ «պահքի մեջ

⁴⁵ ՔՀԲ, էջ 265:

⁴⁶ ՀԼԲԲ, հ. Դ, Ե., 2007, էջ 224:

⁴⁷ ՀԼԲԲ, հ. Դ, էջ 224:

մտնել» իմաստով⁴⁸, իսկ *բասը ուղուշ* (պասը ուտել) հարադրությունը բարբառում փոխաբերացմամբ «պահքը խախտել»⁴⁹ իմաստով է կիրառվում:

«Բառաբարդումը որպես յուրահատուկ լեզվամտածողության արտահայտության միջոց Համշենի բարբառում» հոդվածում քննելով *փուռնիտ*, *թօնքով*, *հաստիք* բարդությունները՝ նրանց երկրորդ բաղադրիչները՝ *նետ* (*նիտ*)⁵⁰, *-քամ* (*քով*)⁵¹, *-դիր* (*տիր*)⁵², դիտարկել ենք հինհայերենյան բայահիմքեր⁵³, և ինչպես Գ. Ջահուկյանն է նշում՝ սերված հնդեվրոպական համապատասխան բայահիմքերից⁵⁴: Կարծում ենք՝ *պասմուտ* բառում ևս բարդության երկրորդ բաղադրիչը՝ *մուտ*-ը հնդեվրոպական նախալեզվի *mōd- «հանդիպել, մոտենալ» հիմքից է⁵⁵, որ ժառանգել են մի շարք լեզուներ, այդ թվում և հայերենը⁵⁶:

«Սրտնեղություն» հասկացությունը բարբառում դրսևորված է *նէսւնքեծկ* բառանվամբ⁵⁷, որը կազմված է ներս+այր(ել)+ոց+ք (ներսայրոցք) բաղադրիչներից (Խօսիլ չիմ, ամա *նէսւնքեծկ* ըղաձ իմ՝ Զեմ խոսում, բայց ներսս վառվում է):

⁴⁸ Հ. Գուրոնյան, *Համշենահայ բանահյուսություն*, Ե., 1991, էջ 314:

⁴⁹ ՋԲԲ, էջ 17:

⁵⁰ Նետ < *nedo- "եղեգն". J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959, f. 759.

⁵¹ ՀՄԲ, էջ 775:

⁵² Գ. Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 248-249

⁵³ Հ. Խաչատրյան, *Բառաբարդումը որպես յուրահատուկ լեզվամտածողության արտահայտության միջոց Համշենի բարբառում*, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2022, էջ 34-35:

⁵⁴ ՀՄԲ, էջ 540:

⁵⁵ Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch*, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959, f. 304.

⁵⁶ Սրա մասին տե՛ս՝ Buck C. D., *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages* (A contribution to the history of ideas), University of Chicago press, Chicago & London, 1988, p. 1366.

⁵⁷ ՋԲԲ, էջ 13:

Եզրակացություն

Ամփոփելով Համշենի բարբառի բաղադրյալ կազմությունների իմաստային դրսևորումների քննությունը՝ կարելի է եզրակացնել, որ Համշենում բարբառների բառակազմական յուրահատկությունները դրսևորվում են բաղադրիչների հոմանիշային, շարադասական տարբերություններով, ինչպես նաև բառաբարդման և ածանցման միջոցներով: Բարբառի բառային բաղադրություններից հատկապես հետաքրքրական են հոմանիշային բարդությունները, որոնցից են *չղջիկ* բառանվան *մաշկընթեվ*, *մաշկաթուլա*, *կիշերամուգ*, *մուգջինջուխկ*, *կիշերֆրուգ*, *կիշերֆրոհճ* և «փայտփորիկ-ի ձառձրկօն, ծառկօտկօտ, քըթքըթիչ, փնդփօրիչ, փնդփօրի, ձրկօն հոմանիշները:

Համշենահայերի պատկերավոր մտածողությամբ պայմանավորված՝ բարբառում *մաշկ* բաղադրիչով ձևավորված է ոչ միայն «*չղջիկ*» հասկացության *մաշկընթեվ*, այլև «շագանակ» հասկացության *մաշմուրք* (*մաշկամիրգ*) բառանունը:

Հոտ և *համ* բառերից ձևավորված բարդությունները քննելիս՝ նկատելի է, որ բարբառում իմաստային առումով տարբերակված են «լավ» և «վատ» հոտերը՝ համապատասխանաբար դրսևորվելով *համ* և *հոտ* բառերով:

Համշենի բարբառում ևս հայրական և մայրական կողմի պապերն ու տատերը անվանվում են տարբեր բաղադրություններով՝ *հնրմօւ*, *մնրմօւ*, *հնրբաբ*, *մնրբաբ*: *Լիլիգ* բաղադրիչով բառանունների քննությամբ պարզվում է, որ Համշենում այն դրսևորված է նաև «խաղալիք» նշանակությամբ:

Նկարագրական բնութագիր ներկայացնող բաղադրություններից Համշենի բարբառում ևս առկա են գրաբարյան *քեռայր* կադապարի համաբանությամբ կազմված *հօրկուրար*, *մօրկուրար*, *դայար* բառանունները: Հատկապես ուշագրավ են իրականության յուրահատուկ ընկալմամբ ձևավորված *մայրօմիգ*, *մայրօմի ջիջու*, *շենկ շինուշ*, *բասը ուդուշ* բարդությունները:

Համշենահայերը, ապրելով մեկուսացած ու կղզիացած, իրենց բառապաշարում ունեն միայն այս բարբառին բնորոշ ինքնատիպ այնպիսի բառանուններ, ինչպիսիք են՝ *օմոռէղ*-ը, *մաշմուրք*-ը, *գայտպուն*-ը, *վըրահագ*-ը, *վըրայընէծ*-ը և այլն:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, մաս 1, Ա պրակ, Ե., 1980:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, հ. 2, Ե., 1973:

Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947:

Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:

Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի բարբառը), Ե., 1962:

Գուրունյան Հ., Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991:

Թահմազ Խ., Ջենիգի բարբառի բառարան, Սոչի, 2014:

Թողլաքյան Բ., Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, Ե., 1981:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, 2002, հ. Դ, 2007, հ. Ե 2008:

Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2009:

Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները, Ե., 2022:

Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Ե., 2009:

Հայերենի բարբառագիտական աստևաի նյութեր հավաքման ծրագրով արված գրանցումներ:

Buck C. D., A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages (A contribution to the history of ideas), University of Chicago press, Chicago & London, 1988:

Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, I, II bend (II Auflage), München: Francke Verlag, Bern, 1959.

Khachatryan Hasmik, Mkrtumyan Anait, Sahakyan Nina - Semantic Manifestations of Compounds in the Hamshen Dialect.- In this article, we have examined the semantic manifestations of compounds in the Hamshen dialect. In Hamshen, the word-building peculiarities of the dialects are manifested by the synonymic and syntactic differences of the components, as well as by means of compounding and derivation. Due to the unique perception of reality, the following dialectal compounds are particularly interesting: *օմեռեղ* (omred - cloud + thunder), *մաշմուրք* (mashmurq - skin fruit - chestnut), *մայրուիդ* (mayromig - ladybird), *քննախէծ* (kynakhets - sleepy), *վրբայրնէծ* (verayenets - coat), *ձառնձրկօն* (dzardzkon - woodpecker), *մուգջինջուխկ* (mugjinjukhk - bat), *դալար* (dalar - sister-in-law's husband), *շէնկ շինուշ* (shenk shinush - needlework), *բասը ուղունշ* (bas udush - breaking the fast), etc.

Keywords: compounding, a dialect, a loanword, word-building, dialectal Armenian language, descriptive lexical pattern, a synonym.

Khachatryan Hasmik, PhD in Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Mkrtumyan Anait, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior laboratory assistant.

Sahakyan Nina, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior laboratory assistant.

Хачатрян Асмик, Мкртумян Анаит, Саакян Нина – Семантические проявления составных образований амшенского диалекта. - В данной статье рассматриваются семантические проявления составных образований амшенского диалекта. В Амшене словообразовательные особенности диалекта проявляются в синонимических и синтаксических различиях компонентов, а также в способах лексикализации и деривации. Благодаря своеобразному восприятию действительности особый интерес представляют диалектные соединения: *օմնեղ* - омред (облако + гром), *մաշմուրք* - машмурк (кожица плода - каштан), *մայրօւիգ* – майромиг (божья коровка), *քնիսիւծ* - кнахец (сонный), *վրայրնեծ* - врайнец (пальто), *ձառնըօն* - дзардзкон (дятел), *մուգջինջուխ* - мугджинджухк (летучая мышь), *դալար* - далар (муж золовки), *շենկ շինուշ* - шенк шинуш (рукоделие), *բաս քրքուշ* - бас удуш (нарушение поста) и др.

Ключевые слова: деривация, диалект, заимствование, словообразование, диалектный армянский, описательная словоформа, синоним.

Хачатрян Асмик, кандидат филологических наук, доцент, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

Мкртумян Анаит, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший лаборант.

Саакян Нина, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший лаборант.

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

DOI:10.54412/2738277X-2023.1.19-33

Կատվայան Վիկտոր

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
առաջատար գիտաշխատող. viktorkatvalyan@mail.ru

Բանալի բառեր. բարբառ, խոսվածք, բարբառային հատկանիշ, քանակական ցուցանիշ, Արարատյան բարբառ, Բայազետի բարբառ, խառը տիպի խոսվածքներ:

Ներածություն

Սուրմալուի գավառը Երևանի նահանգի հարավարևմտյան հատվածում էր, Արաքսի միջին հոսանքի աջափնյա մասում: Հարավից սահմանակից էր Բայազետի գավառին, հյուսիս - արևմուտքից՝ Կաղզվանի օկրուգին, հյուսիսից՝ Էջմիածնի գավառին, հյուսիս-արևելքից՝ Երևանի գավառին, հարավ-արևելքից՝ Մակուի գավառին: Համապատասխանում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Մասյացոտն և Ճակատք գավառներին: 1880 թ. գավառն ուներ մոտ 58000, 1912-ին՝ մոտ 98900 բնակիչ՝ հայերի քանակական գերազանցությամբ: Ինչպես վկայում է Ա. Ահարոնյանը «Ազգագրական հանդես»-ում, 1897 թ. դրությամբ Սուրմալուի գավառում հայերն ապրում էին 22 գյուղերում, նրանց մեծ մասը բնիկներ էին, իսկ փոքրամասնությունը՝ գաղթականներ: Ընդ որում, չնայած բնիկների ու գաղթականների միջև զգալի տարբերությունների վերացմանը՝ «շատերի նոյն իսկ ամբողջ գիւղերի բնիկ կամ գաղթական լինելն ապացուցում է բարբառի, տարազի, սովորությունների, բնաւորութեան գծերի յաճախ խիստ աչքի ընկնող զանազանու-

* Ներկայացվել է 23.06.2023, գրախոսվել՝ 07.07.2023:

թեամբ»¹: Ահարոնյանը փաստում է, որ գաղթականները համարյա յուրաքանչյուր պատերազմից հետո եկել են Պարսկաստանից և Տաճկաստանից: Ըստ նրա՝ Իգդիրի և մոտիկ երկու գյուղերի հայ բնակչությունը եկել է Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից, իսկ Մոլլադամար և երեք այլ գյուղերի բնակիչները եկել են Տաճկաստանից²: Ահարոնյանը նշում է, որ Սուրմալուի իսկական բնիկները կողբեցիք են, բլուրցիք և ակոռեցիք, ապա շեշտում, որ «Կողբեցուց բարբառը, սովորությունները, տարազը տարբեր են մնացած գիւղերի հայերից»³: 1914-20 թթ. հայության մեծ մասը Սուրմալուից գաղթել և բնակություն է հաստատել այժմյան ՀՀ Էջմիածնի ու Արմավիրի շրջանների բնակավայրերում: 1921 թ. Կարսի պայմանագրով Ռուսաստանը Սուրմալուի գավառը զիջել է Թուրքիային⁴:

Այս աշխատանքում մենք անդրադառնում ենք Սուրմալուի գավառի խոսվածքներին երկու պատճառով: Նախ՝ տարածքի բարբառային խոսքը ամբողջական ուսումնասիրության ենթարկված չէ, և ապա՝ կան տարբեր տեսակետներ հիշյալ խոսվածքների վերաբերյալ:

Մեր ուսումնասիրությունը կատարում ենք Սուրմալուի գավառի հայաբնակ տասը գյուղերի լեզվական փաստերի քննությանմբ՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների՝ 20-րդ դարի վերջին քառորդին ՀԲԱ ծրագրով⁵ կատարած գրանցումները: Ուսումնասիրության ոլորտում ընդգրկել ենք գավառի Ալիջան, Բլուր, Էվջիլար, Կողբ, Կուլաբ, Հախվերիս, Ղազուկշլաղ, Մոլլադամար, Տաշբուռուն և Փանիկ գյուղերի խոսվածքներ-

¹ **Ա. Ահարոնյան**, *Սուրմալուի ժողովրդական երգեր*, Ազգագրական հանդես, 1897, Գիրք Բ, էջ 322:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, Ե., 1998, էջ 725:

⁵ *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977:

րի վերաբերյալ լեզվի ինստիտուտում առկա նյութերը⁶: Պետք է նկատել, որ բոլոր դեպքերում բարբառախոս տեղեկատուները եղել են Սուրմալուի գյուղերում ծնվածներ, որոնք հասուն կամ գրեթե հասուն տարիքում են իրենց ընտանիքների հետ գաղթել ու բնակություն հաստատել Արաքսի ձախափնյա գյուղերում: Լեզվական նյութից բացի՝ բարբառախոսները հաղորդել են նաև լրացուցիչ տեղեկություններ: Ըստ տեղեկատուների՝ Սուրմալուի շրջանն ունեցել է 36 գյուղ, իրար մոտ կամ հարևան են եղել Էվջիլար, Փանիկ, Բլուր, Հախվերիս, Տաշբուռուն, Ալիջան, Կողբ գյուղերը, միայն Կողբի հարևանությամբ են հիշատակվել Մոլլաղամարը և Կուլաբը, իսկ Ղազուկշլաղի հարևան գյուղերը թուրքական են եղել: Բարբառախոսների վկայությամբ՝ Էվջիլար գյուղի բնակիչների պապերը եկել են Մոկսից, Տաշբուռունի բնակիչների նախնիները՝ Խոյից: Կողբի խոսվածքի տեղեկատուն նշել է, որ իրենք Իգդիրի շրջանի մյուս հայաբնակ գյուղերից տարբեր են խոսել, Ալիջանի խոսվածքի կրողի վկայությամբ՝ Փանիկի և Ալիջանի լեզուները նման են: Բարբառային հատկանիշները արձանագրելուց առաջ բարբառագետ-գրանցողները հաճախ ներկայացնում են տվյալ խոսվածքի ընդհանուր նկարագիրը կամ առավել ուշագրավ մեկերկու հատկանիշ: Այսպես, որպես կանոն՝ մատնանշվում են խոսվածքներում շնչեղ ձայնեղների առկայությունը, ներկայի կազմության՝ Ում ճյուղին բնորոշ եղանակը: Ա. Հանեյանը գրում է, որ մի շարք հատկանիշներով Մոլլաղամարի խոսվածքը հարում է Բայազետի բարբառին, Ժ.Միքայելյանը նշում է, որ Կուլաբի խոսվածքում որոշիչ հոդը բացակայում է կամ միայն *ն*-ն է, իսկ Դ. Կոստանդյանը Տաշբուռունի խոսվածքի ամենաբնորոշ հատկանիշ է համարել երկարաձգվող հնչերանգը:

⁶ Գրանցումները կատարել են բարբառագետներ Դ. Կոստանդյանը (տետր 395. Տաշբուռուն, 1987 թ.), Ա.Հանեյանը (տետր 407. Մոլլաղամար, 1987 թ.), Գ. Գևորգյանը (տետր 368. Ալիջան, 1987 թ., տետր 413. Ղազուկշլաղ, 1988 թ.), Ժ.Միքայելյանը (տետր 189. Բլուր, 1982 թ., տետր 420. Փանիկ, 1988 թ., տետր 433. Կուլաբ, 1989 թ.), Հ. Խաչատրյանը (տետր 423. Էվջիլար, 1988 թ.), Ա.Մկրտումյանը (տետր 244. Կողբ, 1982 թ.) և բանասեր Լիզա Բաբայանը (տետր 66. Հախվերիս, 1979 թ.):

Հայ բարբառագիտությունը Սուրմալուի գավառի խոսվածքների մասին

Սուրմալուի գյուղերի խոսվածքները Հ.Աճառյանը ընդգրկել է Արարատյան բարբառի մեջ, բացառությամբ Իգդիրի շրջանի, որի բնակչությունը, ըստ նրա, Խոյի գաղթականությունն է⁷: Ա.Ղարիբյանը նշել է, որ Արարատյան բարբառով խոսել են նաև Սուրմալուի և Կաղզվանի շրջանները⁸: Համաձայն Ս.Գյուլբուղադյանի՝ Կողբի (Սուրմալուի) խոսվածքը Արարատյան բարբառի մի մասնակի արտահայտությունն է⁹: Մինչդեռ Ս.Բաղդասարյան-Թափալցյանը Սուրմալուի գյուղերի խոսքը ընդգրկել է Բայազետի բարբառի շրջանակում: Խոսելով ՀԽՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Երասխահուն գյուղի մասին՝ նա գրում է. «.... այստեղ բնակվում են Սուրմալուի շրջանի միայն Տաշբուռուն գյուղից գաղթածները: Գյուղում լավ է պահպանվել Սուրմալուի խոսակցական լեզուն, որը Բայազետի բարբառի ենթաբարբառն է: Հիմնական ու բնորոշ հատկանիշներով նույնանում է Բայազետի բարբառի հետ: Մի քանի յուրահատկություններով տարբերվում է Բայազետի բարբառից, բայց այդ տարբերությունները այնպիսիք չեն, որ իրավունք տան Սուրմալուի խոսակցական լեզուն առանձին բարբառ կոչել»¹⁰: Այսպիսով՝ հայ բարբառագիտության մեջ Սուրմալուի խոսակցական լեզուն մի դեպքում վերագրվել է Արարատյան բարբառին, մյուս դեպքում՝ Բայազետի բարբառին:

⁷ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, 2-րդ մաս, 2013, էջ 329: 1831-1832 թթ. Իգդիրն ունեցել է շուրջ 133 ընտանիք 624 հայ բնակիչներով, որոնց մեծ մասը (100 ընտանիք) ըստ Թուրքմենչայի պայմանագրի այստեղ էր գաղթել Խոյից, Սալմաստից, ինչպես և մի փոքր ուշ՝ Բայազետից (տե՛ս **Թ. Հակոբյան**, *Պատմական Հայաստանի քաղաքները*, Ե., Հայաստան, 1987, էջ 132):

⁸ Տե՛ս **Ա. Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 219:

⁹ **Ս. Գյուլբուղադյան**, *Կողբի խոսվածքի մի քանի առանձնահատկությունները*, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (70), Ե., 1990, էջ 182:

¹⁰ **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, Ե., 1973, էջ 11:

Սուրմալուի խոսվածքների և Արարատյան ու Բայազետի բարբառների փոխհարաբերությունները

Ելնելով մեր հետազոտության բուն նպատակից, այն է՝ ներկայացնել Սուրմալուի գյուղերի խոսվածքների ընդհանուր բնութագիրը և նրանց հարաբերությունները Արարատյան և Բայազետի բարբառների հետ, մենք Գ. Զահուկյանի օրինակով դիտարկումները կատարում ենք 100 բարբառային հատկանիշների շրջանակում¹¹: Ըստ այդմ՝ նախ ներկայացնենք բոլոր խոսվածքներին և Բայազետի բարբառին հատուկ հատկանիշները: Հնչյունական նման հատկանիշներն են. բառակզբում շնչեղ ձայնեղ բաղաձայնների առկայություն (գ՛առ, դ՛ուռ)¹², *նզն*-ի դիմաց *յն* միայն *կայնել* (> *կանզնել*) ձևում, հպաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում (հաշկ, լըվասկ), բառակզբում հավելական ձայնեղ *հ*-ի առկայություն (հ՛ուրիշ, հ՛երես), *ֆ*-ի առկայություն (սէլաֆ, ֆայդօն), շեշտակիր *այ*-ի դիմաց առաջին շարքի ձայնավոր (այ>է՝ *գ՛էլ, է՛ձ*), շեշտակիր *ռ*-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (օճլոդ, սըդոճ), միավանկ բառերի սկզբնային *ե*-ից առաջ *յ*-ի և *ռ*-ից առաջ շրթնային տարրի հավելում (յեզ, յեպ, լոխ, լոճ), բառամիջի ձայնավորի սղում (ավելնալ, սովրել), հինհայերենյան բառաշերտի բազմավանկ բառերի սկզբում *ռ-օ, ե-է* համապատասխանությունների առկայություն (օխճար, օոնալ, էրագ, էրէվալ): Անվանական ընդհանուր հատկանիշներն են՝ *ց/ծ*-ով բացառականի առկայություն (աշխըրկիճ, գ՛ինուճ), *ռււ*-ով ներգոյականի բացակայություն (ի տարբերություն Արարատյան բարբառի), դերանունների թեք հոլովաձևերում *յ*-ի առկայություն (ընձի, ձ՛եզի), ցուցական դերանունների թեք հոլովաձևերում և հոգնակի ուղղականում հավելական *տ, դ*-ի առկայություն (ըստըրա, ընդըրա), անձի և իրի առումների տարբերակում (սիրել ախշըզան), ձայնավորով ավարտվող բառերի *ք* հոգնակերտ (խընամիք, գ՛ինիք), հոգնակերտ *ք*-ից առաջ՝ *ա>է* փոփոխություն (էրէխէք, փէսէք): Բայա-

¹¹ Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972:

¹² Տե՛ս նաև Մ. Գյուլբուղայան, նշվ. աշխ., էջ 183:

կան ընդհանուր հատկանիշներն են՝ 1-ին և 2-րդ (*ել* և *իլ*) լծորդությունների անաժանց բայերի խոնարհման ձևերի տարբերակվածություն (փոխի, նըստա), *ոււ*-ով ներկա (*սիրըւ էմ, մընըւ էք*, ընդ որում՝ ի տարբերություն Բայազետի բարբառի՝ Սուրմալուի 10 խոսվածքներից 8-ը ունեն *ըւ* տարբերակ, և միայն Կուլաբն ու Մուլադամարը ունեն *ոււ*-ով տարբերակ), օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի *ա*-ով ձև (գ՛ալըմ ա), օժանդակ բայի անցյալ անկատար երկ-ձայնավոր ձևերի մեջ *է*-ի սդում (խօսըմ ի, խօսըմ իք): Այսպիսով՝ հնչյունական 12 և ձևաբանական 11 ընդհանուր հատկանիշ ունեն Բայազետի բարբառը և Սուրմալուի խոսվածքները: Ընդ որում՝ բերված հատկանիշների մեծ մասը բնորոշ է նաև Արարատյան բարբառին: Կան նաև հատկանիշներ, որոնք ընդհանուր են Սուրմալուի խոսվածքների մեծամասնությանը և Բայազետի բարբառին: Դրանցից են՝ *ը*-ից հետո և միջձայնավորական դիրքում *բ,գ,դ,ձ,ջ*-ի դիմաց *փ,ք,թ,ց,չ* (*բ՛ուրթ, օչիլ*, բացի Բլուրից, որտեղ առկա են խուլեր՝ *բ՛ուրտ, օճիլ*), հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի (*ղ՛, կ՛*) առկայություն (*ղ՛ագան, ղ՛ուրթ*¹³, չունեն Կողբը և Էվջիլարը), շեշտակիր *է*-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն (*թել, շէրեպ*, չունեն Տաշբուտունը, Ալիջանը և Հախվերիսը), (*ն*)*եր* – ով հոգնակիի Ի հոլովում (*բ՛արձերի, ծաղգըների*, բացի Կողբից, որին վերագրված է հոգնակիի ՌԻ հոլովում¹⁴), ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառություն (*ձ՛ինք*, բացի Կողբից), *ը*-ով վաղակատար (*գ՛ըրէր, գարմացէր*, բացի Կողբից), Ե լծորդության անաժանց բայերի՝ նաև ոչ ցոյական կատարյալ (*գ՛ըրի, փօխի*, բացի Կողբից և Հախվերիսից), ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն (*չէմ/ ասի, մընա*, բացի Կողբից¹⁵), վա-

¹³ Օգտագործված *ղ՛* պայմանական նշանով նկատի ունենք հետնալեզվային հպաշփական բաղաձայն, որը համատեղում է *կ*-ին հատուկ հպում և *ղ*-ին հատուկ շփում:

¹⁴ Տվյալը բերվում է ըստ թիվ 244 տետրի, սակայն Ս. Գյուլբուդադյանը Կողբի խոսվածքին նվիրված իր հոդվածում նման հատկանիշ չի արձանագրում:

¹⁵ Ըստ թիվ 244 տետրի՝ (*չեմ*) *գ՛ըրեկ*, (*չեմ*) *մընապ*, բայց ըստ Ս. Գյուլբուդադյանի՝ *նկարի, հաղա* (Ս. Գյուլբուդադյան, նշվ. աշխ., էջ 186):

ղակատարի *բ*-ի անկում օժանդակ բայից հետո (*յես եմ գ՛րքե*. բացի Կողբից), եզակի հրամայականի պատճառական բայերի *ա* վերջավորություն (*բ՛անցըրցըրա՛, նըստըցըրա՛*. բացի Կողբից և Մովլաղամարից), տրականով ենթակայի դրսևորում (*Ընձի մէ ձ՛ի ունեմ*. բացի Էվջիլարից և Մովլաղամարից): Այս հատկանիշներից մի քանիսը, հատուկ լինելով Բայագետի բարբառին, բնորոշ չեն Արարատյան բարբառին¹⁶: Այդպիսիք են՝ ձայնավորահանգ բառերի կըրկնակի հոդառություն, հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի առկայություն, *բ*-ով վաղակատար, շեշտակիր *ե*-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն, վաղակատարի *բ*-ի անկում օժանդակ բայից հետո:

Բայագետի բարբառին բնորոշ մի շարք հատկանիշներ էլ իրենց արտահայտությունն ունեն Սուրմալուի խոսվածքների փոքր մասում: Այսպես, *ա*) հինհայերենյան *հ*-ի դիմաց ոչ առնմանական *խ* ունեն Տաշբուռունի, Կուլաբի, Մովլաղամարի, Ղազուկշլաղի խոսվածքները (խաց, խավ), *բ*) իկ-ով դերանվանական ձևեր ունեն Բլուրի, Մովլաղամարի, Փանիկի խոսվածքները (ընձիկ, ձ՛եզիկ), *գ*) հատուկ տեղանունների Ա հոլովում ունեն Տաշբուռունի, Կողբի, Էվջիլարի, Մովլաղամարի և Ղազուկշլաղի խոսվածքները (Մեվանա, Աբարանա), *դ*) *քեզ* դերանվան *քե* ձև ունեն Կողբի, Կուլաբի, Մովլաղամարի խոսվածքները, *ե*) *ուլ* դերանվան սեռականի *վիր* ձև ունեն Տաշբուռունի, Կուլաբի, Ղազուկշլաղի խոսվածքները, *զ*) *ուկ*-ով հարակատար դերբայ ունեն Կուլաբի և Մովլաղամարի խոսվածքները (նըստուկ, քընուկ), *է*) առաջին լծորդության անաժանց բայերի ըղձական ապառնու եզակի 3-րդ դեմքի *ա* վերջավորություն ունեն Կուլաբի և Մովլաղամարի խոսվածքները (գ՛ըրա, նըկարա), *ը*) *գնալ*, *մնալ* բայերի անցյալի *գաց*, *մաց* հիմքեր ունեն Տաշբուռունի, Կուլաբի և Մովլաղամարի խոսվածքները, *թ*) պատճառական բայերի ըղձական ապառնիում *ու*-ով վերջավորություն

¹⁶ Մեր դիտարկմամբ՝ Բայագետի և Արարատյան բարբառները տարբերվում են հատկանիշների 28,5 միավորով (տե՛ս Վ. Կատվայան, *Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 484):

ունեն Կուլաբի և Մոլլաղամարի խոսվածքները: Այսպիսով՝ Ալիջանը և Հախվերիսը այս կարգի հատկանիշներ չունեն, երկուական նման հատկանիշ ունեն Բլուրը, Էվջիլարը և Փանիկը, չորսական՝ Ղազուկշլաղը և Տաշբուռունը, ութ նման հատկանիշ ունի Կուլաբը, և ինը՝ Մոլլաղամարը:

Կան հատկանիշներ, որոնցով Բայազետի բարբառը տարբերվում է Սուրմալուի բոլոր գյուղերի խոսվածքներից (նաև Արարատյան բարբառից): Այդպիսիք են՝ շրթնայնացած *ա*-ի առկայություն, *է(ն)* –ով բացառականի դրսևորում, *ով* դերանվան *վորը* տարբերակ, ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմություն (չեմ գ՛րբեր եմ), ժխտական խոնարհման եզակի 3-րդ դեմքում *չի* ձևի դիմաց՝ *չը* (չըբ՛ էրա, չըտենա):

Սուրմալուի տարբեր խոսվածքներում արտահայտվող՝ Արարատյան բարբառին բնորոշ և Բայազետի բարբառից տարբերակող հատկանիշներից են՝ ա) բառակզբի *հո*-ի դիմաց՝ *ֆո* (*ֆող*, *ֆոտ*. չունեն միայն Կուլաբն ու Մոլլաղամարը), բ) *խ*-ի դիմաց տարնմանական *հ* (*հաղալ*. չունեն Տաշբուռունը, Մոլլաղամարը և Ղազուկշլաղը), գ) *ույ*, *յու* երկինչունների դիմաց՝ *ի* (*արին*, *քիր*. ունի միայն Հախվերիսը), դ) ներգոյականի իմաստի արտահայտություն տրականով (*ջ՛րրին*, *ֆողին*. չունեն Կուլաբը, Մոլլաղամարը, Ղազուկշլաղը), բացառական հոլովի հոդառություն (*ջ՛րրիցը*. դիտվել է Կողբում և Փանիկում):

Բայազետի բարբառից Սուրմալուի գյուղերի խոսվածքների տարբերությունների քանակական ցուցանիշներն այսպիսին են.

Մոլլաղամար՝ 11 միավոր, Կուլաբ՝ 16 միավոր, Տաշբուռուն և Ղազուկշլաղ՝ 23-ական միավոր, Փանիկ՝ 29,5 միավոր, Բլուր և Էվջիլար՝ 30,5-ական միավոր, Հախվերիս՝ 31,5 միավոր, Ալիջան՝ 32 միավոր, Կողբ՝ 33,5 միավոր:

Այսպիսով՝ համաձայն Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական մեթոդի՝ Մոլլաղամարի և Կուլաբի խոսվածքները ներկայացնում են Բայազետի բարբառը: Սրանք, ի տարբերություն մյուս խոսվածքների, ունեն այդ բարբառի էական հատկանիշների

փունջ, ինչպիսիք են՝ հինհայերենյան *հ*-ի դիմաց ոչ առնմանական *խ*, *քեզ* դերանվան *քե* ձև, ներգոյականի իմաստի արտահայտություն հայցականով, ինչպես նաև սեռականով և *մեջ* կապով, *ուկ*-ով հարակատար դերբայ, անկատարի *ուս*-ով (և ոչ թե՝ *ըս*-ով) տարբերակ, Ե լծորդության անաժանց բայերի ըղձական ապառնու եզակի 3-րդ դեմքի *ա* վերջավորություն, *զնալ*, *մնալ* բայերի անցյալի *զաց*, *մաց* հիմքեր, պատճառական բայերի ըղձական ապառնիում *ու*-ով վերջավորություն: Կարծում ենք՝ Բայագետի բարբառի որոշ հատկանիշների կորուստը այս խոսվածքներում պետք է բացատրել Արարատյան բարբառի ազդեցությամբ: Խառը պատկեր են ներկայացնում Տաշբուռունի և Ղազուկշլաղի խոսվածքները՝ Բայագետի բարբառից տարբերվող 23 միավոր հատկանիշներով: Սրանք ունեն Արարատյան բարբառին բնորոշ «բառասկզբի *հո*-ի դիմաց՝ *ֆո*» հատկանիշը, բայց չունեն «*խ*-ի դիմաց տարնմանական *հ*», ունեն Բայագետի բարբառին բնորոշ՝ «*ու*՝ դերանվան սեռականի *վիր* ձև», «հինհայերենյան *հ*-ի դիմաց ոչ առնմանական *խ*», Տաշբուռունի ունի «*զնալ*, *մնալ* բայերի անցյալի *զաց*, *մաց* հիմքեր», Ղազուկշլաղը՝ «ներգոյականի իմաստի արտահայտություն հայցականով, սեռականով և *մեջ* կապով» հատկանիշներ և այլն: Պետք է կարծել, որ դիտարկվող մյուս գյուղերի խոսվածքները (Փանիկ, Բլուր, Էվջիլար, Հախվերիս, Ալիջան, Կողբ), Բայագետի բարբառից ունենալով տարբերակող հատկանիշների զգալի քանակություն և լինելով Արարատյան բարբառի դրսևորումներ, այնուամենայնիվ կրել են առաջինի որոշ ազդեցություն՝ հանդես բերելով այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են շեշտակիր *ռ*-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն¹⁷, ձայնավորահանգ բառերի կրկնակի հոդառություն, դերանունների թեք հոլովաձևերում *խ*-ի առկայություն, *ը*-ով վաղակատար, եզակի հրամայականի պատճառական բայերի *ա* վերջավորություն և այլն:

¹⁷ Այս հատկանիշը կարող է լինել նաև Խոյի բարբառի ազդեցություն:

Եզրակացություն

Ասվածք թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Հետազոտությամբ ձեռք բերված փաստերն ու տվյալները ոչ թե հակասում են լեզվաբանների և բարբառախոսների հայտնած տեղեկություններին, այլ թույլ են տալիս որոշ չափով ճշգրտել դրանք: Այսպես.

ա) Հ. Աճառյանը և Ա. Ղարիբյանը մասամբ իրավացի էին՝ Սուրմալուի տարածքի բարբառային խոսքը ընդգրկելով Արարատյան բարբառի կազմում, բայց մասամբ իրավացի էր նաև Ս. Բաղդասարյան-Թափալցյանը, երբ հիշյալ տարածքի բարբառային խոսքը համարում էր Բայազետի բարբառի դրսևորում.

բ) Բարբառախոսների վկայությամբ՝ գյուղերի մեծ մասը իրար հարևան են եղել, իսկ Մոլլաղամար, Կուլաբ, Ղազիկշլաղ գյուղերը նրանցից որոշ հեռավորություն են ունեցել: Պարզվում է՝ առաջինները ներկայացնում են Արարատյան բարբառը, իսկ երկրորդները սրանցից տարբերվում են նաև լեզվական առումով: Տաշբուռուն գյուղը, ըստ բարբառախոսների ունենալով Խոյից եկած բնակչություն, բայի անցյալի ձևերի 1-ին դեմքում պահպանել է Խոյի բարբառին բնորոշ *ւ* հավելումը: Բարբառախոսի այն վկայությունը, որ Կողբի խոսվածքը որոշակիորեն առանձնանում է մյուս գյուղերի խոսվածքներից, համապատասխանում է իրականությանը:

2. Սուրմալուի գավառի բնակավայրերը լեզվական առումով համասեռ չեն, դրանց խոսվածքները չեն կարող համարվել մեկ միասնական բարբառային միավոր՝ Սուրմալուի խոսվածք անվանումով:

3. Հիշյալ գավառի՝ մեր դիտարկած գյուղերը լեզվական հատկանիշով բաժանվում են երեք խմբի.

ա) Արարատյան բարբառի խոսվածքներով հաղորդակցվող գյուղեր՝ Փանիկ, Բլուր, Էվջիլար, Հախվերիս, Ալիջան, Կողբ,

բ) Բայազետի բարբառի խոսվածքներով հաղորդակցվող գյուղեր՝ Մոլլաղամար, Կուլաբ,

գ) խառը տիպի խոսվածքներով հաղորդակցվող գյուղեր՝ Տաշբուռուն, Ղազիկշլաղ:

4. Բոլոր խոսվածքներն էլ, գտնվելով Արարատյան և Բայազետի բարբառների շփման գոտում, այս կամ այն չափով համատեղում են այդ բարբառների որոշ հատկանիշներ, ունեն նաև հատկանիշներ, որոնք ընդհանուր են այդ երկու բարբառներին:

Օգտագործված գրականություն

Ահարոնյան Ա., Սուրմալուի ժողովրդական երգեր, Ազգագրական հանդես, 1897, Գիրք Բ:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, ԵՊՀ, 2013:

Բաղդասարյան-Թափալցյան Ս., Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973:

Գյուլբուդաղյան Ս., Կողբի խոսվածքի մի քանի առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (70), Ե., 1990թ:

Կատվայան Վ., Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., «Ասողիկ» հրատ., 2016:

Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., Հայաստան, 1987:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևանի համալսարանի հրատ, Ե., 1998:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:

Katvalyan Viktor - About Armenian Speech of Surmalu Region.- The researchers attributed the dialect speech of the Surmalu region to either Ararat or Bayazet dialects, ignoring internal differences. Observation of the speeches of a dozen settlements of the region allows us to fix that the

settlements of the province of Surmalu are not linguistically identical, their speeches cannot be considered a single dialect unit, called the Surmalu dialect. The mentioned settlements are divided into three groups according to language: a) villagers who speak the Ararat dialect, b) villagers who speak the Bayazet dialect, c) villagers who speak mixed speeches. All speeches that are in the zone of contact between the Ararat and Bayazet dialects, to a greater or lesser extent, combine some features of these dialects, and also have features common to both dialects.

Keywords: dialect, speech, dialect feature, quantitative indicator, Ararat dialect, Bayazet dialect, mixed speeches.

Katvalyan Victor, Doctor in Philology, Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Leading Researcher.

Катвалян Виктор - Об армянской наречии области Сурмалу.- Исследователи отнесли диалектную речь района Сурмалу либо к Араратскому, либо к Баязетскому диалектам, не обращая внимания на внутренние различия. Наблюдение за говорами десятка населенных пунктов региона позволяет зафиксировать, что населенные пункты провинции Сурмалу не являются лингвистически тождественными, их говоры нельзя считать единой диалектной единицей, называемой диалектом Сурмалу. Упомянутые населенные пункты делятся на три группы по языковому признаку: а) деревни, говорящие на Араратском диалекте, б) деревни, говорящие на Баязетском диалекте, в) деревни, говорящие говорами смешанного типа. Все говоры, находящиеся в зоне соприкосновения Араратского и Баязетского диалектов, в большей или меньшей степени сочетают в себе некоторые черты этих диалектов, а также имеют черты, общие для обоих диалектов.

Ключевые слова - диалект, говор, диалектный признак, количественный показатель, Араратский диалект, Баязетский диалект, говоры смешанного типа.

Катвалян Виктор, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, ведущий научный сотрудник.

ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱՒԻ) ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝

DOI: 10.54412/2738277X-2023.1.19-45

Հովհաննիսյան Լավրենտի
բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գլխավոր գիտաշխատող

Բանալի բառեր. բառ, բարբառ, Ղարաբաղի (Արցախի) բարբառ, գրաբար, հնդեվրոպական արմատ, ստուգաբանություն, փոխառություն:

Նախաբան

Ղարաբաղի (Արցախի) բարբառը հայերենի ամենատարածված ու կենսունակ բարբառներից է: Բարբառում գործածվում է 25 հազար բառ, բառային տարբերակներով՝ 40 հազար:

Բնականաբար, կան բնիկ հնդեվրոպական ծագում ունեցող բառեր, հին փոխառություններ, որոնք ստուգաբանված են: Գ. Ջահուկյանը ըստ կարելիության քննել, ստուգաբանել է հայերենի բոլոր բարբառների հնդեվրոպական ծագում ունեցող բառերը¹: Գիտնականը այդ բառերը դասակարգում է ըստ տարբեր տիպերի (հատկանիշների):

Կարևոր ենք համարում հատկապես գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների կամ արմատական բառերի դասակարգումը: Մեր հաշվումներով Ղարաբաղի (Արցախի) բարբառում գործածվող հնդեվրոպական ծագում ունեցող մոտ 100 բառ գրաբարում վկայված չէ:

* Ներկայացվել է 13.05.2023, գրախոսվել՝ 06.06.2023:

¹ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 248-330:

Բարբառային բառերի ստուգաբանություններ ունի Ալ. Մարգարյանը²:

Ներքոգրյալ բառերը ստուգաբանված չեն (բացառելի չէ, որ կլինեն ստուգաբանություններ, որոնց տեղյակ չենք):

ԻՍՏ – գործածվում է կապակցության մեջ³:

Իստը նի կենալ – ջղայնանալ, գայրանալ:

Իստը նի կըքընել – ջղայնացնել, գայրացնել:

Բարբառում նման կապակցություններ կան նաև *թօք* բառով: Ավելի հաճախադեպ է *իստ-ի* և *թօք-ի* հոգնակի թվով գործածությունը:

Թօք-ը մարմնի մաս նշող բառ է: Մարմնի զույգ անդամները սովորաբար հոգնակի թվով են գործածվում: *Երիկամ* բառը գրաբարում անեզական է՝ *երիկամունք*: Հուն.՝ νεφρος՝ «երիկամ», սովորաբար գործածվում է հոգնակի թվով:

Իստ-ը հնչյունական և բառիմաստային ընդհանրություններ ունի սլավոնական լեզուների *исто*-ի հետ (հ. սլավ., հ. ռուս.՝ *исто*)⁴:

Առայժմ անհասկանալի է մնում *իստ* բառի հայտնվելու ուղին:

ԼԱԼՈՒՇ – կանանց, երեխաների կոիվ՝ աղմուկ-աղաղակ:

Լալուշ անել – վիճել:

Մի հոդվածում բառի զուգահեռը համարել ենք հունարեն *Λαλεω*-ն՝ «իզուր խոսել, շատախոսել»⁵: Ավելի հավանական ենք

² Հրատարակված հոդվածները զետեղված են հեղինակի «Ստուգաբանություններ» (Ե., 2015) էլ. գրքում: Բառաքնական-ստուգաբանական դիտարկումներ ունեն այլ լեզվաբաններ, բանասերներ: (Մեր ոչ ծավալուն հոդվածում պատեհ չենք համարում մանրամասներ):

³ Բառերի նշանակությունը, տվյալ բառով կապակցությունները ներկայացնում ենք այնպես, ինչպես բառարանում. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2010 (այսուհետև՝ ՂԲԲ):

⁴ **Фасмер М.**, *Этимологический словарь русского языка*, Т. II, Москва, 1986, стр. 143.

⁵ **Լ. Հովհաննիսյան**, *Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն*, Պատմաբանասիրական հանդես, № 1, Ե., 2019, էջ 180:

համարում Սպահանի բարբառում գործածվող *ālāluš*-ը՝ «վեճ, աղմուկ»՝ հաշվի առնելով հատկապես *-uš* ձևային առկայությունը:

ՀԷՆԹԻ – շատ սև դեմք ունեցող: Ակնհայտորեն *հինդի / հնդիկ* բառն է: Հնում հնդիկ էին կոչում նաև եթովպացիներին: Ամենահին վկայությունը արձանագրվել է Աստվածաշնչում. «Եթե փոխիցե *հնդիկ* զմորթ իւր և ինձ զխայտուցս իւր» (Երեմ. ԺԳ. 23): Հունարեն Աստվածաշնչում՝ Αἰθίοψ: Գրաբարում վկայված է նաև *հնդկագոյն* ձևը. «Որ է ի գոյն հնդկի, սեաւ կամ սևագոյն քան զհնդկի»⁶:

ULCS / UES – որևէ բանի մասին տեղեկություն ստացած, իրազեկ:

Սըտ ինիլ – տեղյակ լինել:

Սըտ պահել – տեղեկացնել, իրազեկել:

*Ստոյգ*⁷՝ թերևս հնդերոպական *steuwa* ձևից, որ ծագում է *setu*-ից, հին հնդկերեն (սանսկրիտ)՝ *satya*: Ենթադրվում է, որ նույն արմատն է նաև *h. սլավ. Istu* «իրական, ստույգ» բառերում:

ՏԷՂԱԿ / ՏԵՂԱԿ՝ սըտ բառի հոմանիշն է: Բարբառում տեղակ անել նշանակում է նաև մի բանի մասին հետաքրքրվել, հայտնել:

Գրաբարում *տեղ*՝ «վայր» բառով կան մի շարք կազմություններ՝ *եսող, գտեղ, ստեղ, տեղի*:

Տեղ բառի արմատն է *sed*-ը՝ «նստել»⁸:

Կարելի է ենթադրել, որ տեղակ բառի արմատը նույնպես տեղ՝ «վայր» բառն է: Ստուգաբանական բառարաններում «տեղակ»-ը գլխաբառով բառահոդված է:

ՀԱԲ-ում *տեղակ*-ը ստուգաբանված չէ, իսկ Գ. Զահուկյանը ենթադրում է, որ բնիկ հնդեվրոպական *del*՝ «նշան բռնել, նպատակադրվել» արմատն է՝ հավելելով՝ «հազիվ թե կապ ունենա *տեղ* բառի հետ»⁹:

⁶ Գ. Աւետիքյան, Խ. Միրսեյան, Մ. Ազերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզվի*, հ. II, Վենետիկ 1837, էջ 108:

⁷ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 277:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 393:

⁹ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 726:

Եզրակացություն

Հոդվածում ստուգաբանված է Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառ: Բազմաթիվ բառեր դեռ ստուգաբանված չեն:

Հայերենի բարբառների հնդեվրոպական ծագում ունեցող բառերի, հին փոխառությունների ստուգաբանությունները կարևոր են հայոց լեզվի, նաև հայոց պատմության որոշ իրողությունների լուսաբանման դիտակետից:

Օգտագործված գրականություն

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979:

Աստուածաշունչ, Մատեան հին և նոր կտակարանաց, Վիեննա, 1929:

Աւետիքյան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզվի, հ. 2, Վենետիկ, 1837:

Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն, Պատմաբանասիրական հանդես, № 1, Ե., 2019, էջ 177- 183:

Մարգարյան Ալ., Ստուգաբանություններ, Ե., 2015 (էլ. գիրք):

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Ջահուկյան Գ., Հայերենի ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

Фасмер М., Этимологический словарь русского языка, Т. II, Москва, 1986.

Կարծում ենք՝ «նշան բռնել, նպատակադրվել»-ու և «տեղյակ լինել»-ու միջև կապը համոզիչ չէ: Ալ. Մարգարյանը տարաբնույթ փաստարկներով հիմնավորում է *տեղեակ* բառի *տեղ* արմատի կապը «տեղ, վայր» բառի հետ: -*Ալ* ածանցը, արմատի վրա դրվելով, ցույց է տալիս տարբեր հատկանիշներ: Հմմտ. *ունակ, բուժակ, գիտակ*... Ճիշտ այդ ձևով էլ -*ակ* ածանցը, դրվելով *տեղի* արմատի վրա, նրան տվել է «հմուտ, գիտակ» նշանակությունը... Տեղյակ լինել հենց նշանակում է տեղը իմանալ: (Մարգարյան Ալ., Ստուգաբանություններ, Ե., 2015, էջ 20-21):

Համառոտագրություններ

հ. ռուս – հին ռուսերեն

հ. սլավ. – հին սլավոներեն

հուն. – հունարեն

ռուս. – ռուսերեն

Hovhannisyan Lavrenti - The etymology of some words of Karabakh (Artsakh) dialect. - *Ist* signifies “kidney”. In some Slavic languages such as old Slovenian and old Russian, the word “isto” is employed. *Isto* refers to kidneys. *Lāhuš* means quarrel. In the dialect of Isfahan the word “Ālāluš” is employed. *Henti* describes an individual with a very dark face, having the same meaning as *Hindi* (Indian). *Hindi* was used to refer to Ethiopians as well. *Šet* denotes being aware or informed, deriving from the root *Setu* of the Indo-European *Steuwā*.

Keywords: word, dialect, Karabakh (Artsakh) dialect, Grabar, Indo-European root, etymology, loan word.

Hovhannisyan Lavrenti, Doctor of Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Principal Researcher.

Оганесян Лаврентий - Этимология нескольких слов карабахского (арцахского) диалекта. - *Ist* - почка в славянских языках. В старославянском и в старорусском - *isto*. *Lāhuš* – драка, шум. В исфаханском диалекте – “Ālāluš”. *Henti* – очень смуглый, то же самое, что *hind* (индус). *Set* - осведомлённый, исходит из индоевропейского *setu*.

Ключевые слова: слово, диалект, карабахский (арцахский) диалект, грабар, индоевропейский корень, этимология, заимствованное слово.

Оганесян Лаврентий, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, главный научный сотрудник.

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

DOI:10.54412/2738277X-2023.1.19-50

Ներսիսյան Վարսիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. varsik.nersisyan@mail.ru

Բանալի բառեր. բառաստեղծման տեխնիկա, բառաստեղծման փուլեր, ձևայիններ, հապավում, բարդաձանցավոր բառեր, աճական:

Նախաբան

Համաժամանակյա բառակազմության ոլորտում առկա տարբեր խնդիրներով պայմանավորված՝ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել բառակազմության ուսմունքի զարգացման ընթացքը, բացահայտել տարբեր հայերենագետների մոտեցումները խնդրո առարկա թեմայի շուրջ: Սույն ուսումնասիրության միջոցով փորձել ենք ներկայացնել Գուրգեն Սևակի մոտեցումներն ու տեսական հիմնավորումները հայերենի բառակազմության տարբեր հարցերի վերաբերյալ:

Գուրգեն Սևակի (1904-1980) մի շարք լեզվաբանական ուսումնասիրություններից կարևորվում են հատկապես հետևյալները. «Խոսքի մասերի ուսմունքը. ներածություն», «Հայոց լեզվի շարահյուսություն», «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն», «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն», «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»¹: Ուսումնասիրության թեմայով պայ-

* Ներկայացվել է 22.05.2023, գրախոսվել՝ 25.05.2023:

¹ Հմմտ. **Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը. ներածություն**, Պետհամալսարանի գիտական աշխատություններ, հ. XI, Ե., 1939, էջ 189-244: **Գ. Սևակ, Հայոց լեզվի**

մանավորված՝ կարևորվում են հատկապես վերջին երկուսը, որոնցից «*Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*»-ը, Է. Ադայանի վկայությամբ, «ավելի շուտ ժամանակակից հայոց լեզվի պատմության դրվագներն է ներկայացնում, քան ամբողջ պատմական պրոցեսը»², իսկ երկրորդը՝ «*Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը*», «*Ժամանակակից հայոց լեզվի տեսության*» երկու գրքերի վերամշակված հրատարակությունն է, և որը «Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» մենագրությունից հետո մեր գրական լեզվի ամենալուրջ ուսումնասիրությունն է և խոշոր ներդրում հայերենագիտության բնագավառում»³: «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատության մեջ ներկայացնելով բառապաշարի տեղաշարժերը՝ նոր բառապաշարի առաջացումը կապում է «Մեծ հոկտեմբերի» հետ՝ խոսելով նորաբանությունների, հնաբաների, «հարություն առած» գրաբարի ու միջին հայերենի բազմաթիվ բառերի, «ժողովրդական բառերի որոշ փոխառությունների» մասին, որոնցից հատկապես կարևորել է բառակազմության ձևերը՝ որպես բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր⁴: Բառակազմության հարցերին անդրադարձել է նաև «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատության մեջ, որի առաջաբանում նշում է, որ կատարված են շտկումներ, մասնակի հավելումներ և նյութի որոշ վերաբաշխում: Դրանք հիմնականում կապված են իր իսկ բնորոշմամբ՝ «որոշ մեղանշումների, սխալների» հետ, որոնք «վերացրել ու ճշտել է»⁵: Նախորդ հրատարակությունները լույս են տեսել 1939 թ. (գիրք Ա), 1947 թ. (գիրք Բ): Հեղինակը գոհու-

շարահյուսություն, միջն. դարոցի 7-րդ դասարանի դասագիրք, Ե., 1936: **Գ. Սեվակ**, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն». գիրք Ա, Ե., 1939, գիրք Բ, պր. I, Ե., 1947: **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն. գիրք Ա, Ե., 1939, գիրք Բ, պր. I, Ե., 1947: **Գ. Սևակ**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948: **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955:

² **Է. Ադայան**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 325:

³ **Է. Ադայան**, նույն տեղում:

⁴ Տե՛ս **Գ. Սևակ**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, էջ 156-157:

⁵ Տե՛ս **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 12:

նակությամբ նշում է, որ «սույն աշխատության մեջ իր կողմից առաջ քաշված բազմաթիվ դրույթներ ու պրոբլեմներ իրենց լուծումներով բռնեցին ժամանակի դժվարին քննությունը և ընդունվեցին հայագիտության կողմից. այդպիսիներից են հնչույթի ու ձևույթի տեսությունը, բառի հասկացությունը, բայի հիմնական երեք հատկանիշների դրույթը, դերբայների հասկացությունը, հայերենի բառային կազմի շերտերի դրույթը, ժամանակակից հայոց լեզվի կազմավորման ու համակարգի տեսությունը, և, մանավանդ, խոսքի մասերի նոր՝ իմացաբանական ուսմունքը»⁶: Այս ձեվակերպումն ուշագրավ է այն առումով, որ *հնչույթի* և *ձևույթի* մասին հայ իրականության մեջ առաջին անգամ խոսել է Գր. Ղափանցյանը (նա հայերեն առանձին տերմին դեռ չի ստեղծում և ձևույթի համար գործածում է «մորֆեմա» միջազգային տերմինը)⁷, սակայն հետագայում դրանք խորությամբ քննել է հատկապես Սևակը⁸:

Հապավումների քննությունը Գ. Սևակի աշխատություններում

Գ. Սևակն իր աշխատություններում բառերը բաժանում է հետևյալ տեսակների՝ պարզ կամ արմատական, ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր⁹, ի տարբերություն Ա. Այտընյանի, Ստ. Պալասանյանի, Մ. Աբեղյանի, որոնց աշխատություններում *բարդաձանցավոր* տեսակը չի ներկայացվում: Թերևս առաջիններից է, որ հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել հապավումները (եթե նկատի չունենանք, որ հապավումների և դրանց տեսակների մասին ընդհանուր գիտելիքներ է տվել նաև Արարատ Ղարիբյանը՝ ավելի վաղ հրատարակված՝ հայոց լեզվի քերականության դպրոցական նոր դասագրքում¹⁰)՝ *բառակազմության նոր տեխնիկա* համարելով նորագույն հապավումները, բառապատճենումները, ինչպես նաև փո-

⁶ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁷ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 215:

⁸ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 358-359:

⁹ Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 143, էջ 158-198:

¹⁰ Տե՛ս Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 294-295:

խառնությունները¹¹: Ըստ Սևակի՝ «Հապավում (աբբեվիատուրա) կոչվում է բառակազմության այն տեսակը, երբ բարդ բառի բաղադրիչները (բոլորը կամ մի մասը) ո՛չ թե բառ կամ արմատ են, ա՛յլ արմատից մեխանիկորեն վերցված որևէ պայմանական մաս, որ երբևէ այլ գործածություն չունին և չեն ունեցել»¹²: Հետաքրքիր դիտարկում է այն, որ «Հապավումները, որոնց սաղմերը կարող ենք գտնել շատ հին ժամանակներում, բառակազմության մյուս բոլոր ձևերից ծագումնաբանորեն տարբերվում են նրանով, որ մինչդեռ անիսկական բարդությունները բանավոր լեզվի ստեղծագործություն են, որ տարածվել են նաև գրավոր լեզվի մեջ ու ծավալվել, հապավումները ընդհակառակն՝ գրավոր լեզվի ստեղծագործություն են, ծագում են հենց կրճատ գրությունից և հետագայում են մտել բանավոր լեզվի մեջ ու ծավալվել»¹³: Բերում է օրինակներ հին գործածություններից՝ դրանք բացատրելով «մագաղաթի թանկ լինելու և քիչ տարածության վրա շատ բառեր գրելու նպատակով»: Դրանցից են՝ *ած=աստված, եպսկպս, ՀՆԹՀ = Հիսուս Նազովրեցի Թագաւոր Հրեից, քահ=քահանա* ևն¹⁴: Ըստ Սևակի՝ «Հապավումը հենված է տեխնիցիզմի և մեխանիցիզմի պատվանդանի վրա: Եվ իրոք, բառակազմության մյուս արտահայտությունները, գրում է Սևակը, - (իսկական և անիսկական բարդություններն ու ածանցումները պահպանում են առանձին բաղադրիչների իմաստ արտահայտող ձևերը (արմատ և ածանց) և գիտակցորեն կարող են վերլուծվել ու համադրվել նաև տվյալ բաղադրություններին անձանոթ մարդկանց կողմից, մինչդեռ հապավումները մեխանիկական կցկցում են բաղադրիչներից մեխանիկորեն պոկված մասերի և անմատչելի ու հանելուկային են նրանց համար, որոնք չգիտեն յուրաքանչյուր տվյալ հապավումի կազմությունը»¹⁵: «Այդ բեկորները, որ մեծա-

¹¹ Տե՛ս **Գ. Սևակ**, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 158-159:

¹² **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 164: **Ծանոթություն**: Կետադրությունն այստեղ և մնացած մեջբերումներում տրվում է ըստ բնագրի:

¹³ Տե՛ս **Գ. Սևակ**, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 165:

¹⁴ Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 165:

¹⁵ **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 167:

գույն մասամբ հանդիսանում են բառի առաջին վանկը կամ առաջին տառը (հնչյունը), դառնում են մի տեսակ փոխարինող կամ ներկայացուցիչ՝ ամբողջ մայր բառի համար: Այդպիսի բեկորները կոչվում են *թեմաներ* (իմա՝ *հապավույթ*¹⁶՝ Վ.Ն.) և նրանցից շատերն արդեն ունեն իրենց կայուն իմաստը¹⁷: Օրինակ՝ *ապ-ապահովություն* (*սոցապ, պետապ*), *բուժ-բուժական, բուժականների* (*բուժպրոֆիլակտիկ* նն), բերում է երկու էջից ավել օրինակներ¹⁸: Նկատում է, որ «հապավման թեմաները ամբողջ բառից կտրված են բառերի կրճատ գրության այն կանոնի համաձայն, ըստ որի կրճատ գրվող բառամասը սովորաբար վերջանում է բաղաձայնով, ինչպես՝ Միք. (Միքայել), պրոֆ. (պրոֆեսոր) նն»¹⁹: Նույն բանն ունենք և անձնանունների դեպքում՝ *Գուրգեն-Գ., Գրիգոր-Գր.* նն²⁰: «Հայոց լեզվի բառակրճատման հենց այս կանոնով էլ առնվում են հապավման թեմաները, որով վերստին ընդգծվում է այդ երևույթի առաջ գալը գրավոր լեզվից»²¹, -գրում է Սևակը: Ներկայացված 70 թեմաներն էլ ավարտվում են բաղաձայնով, նրանցից 64-ին ուղղակի հաջորդում է ձայնավոր և միայն 6-ին է հաջորդում բաղաձայն, այդ էլ այն պատճառով, որ տվյալ լրիվ բառի մեջ երկու կամ ավելի բաղաձայնի կուտակում կա²²: Հապավումները դասակարգելիս նշում է, որ մի քանիսի մեջ նկատվում է անհրաժեշտ թեմայի կամ բառի լիակատար բացակայություն, թեև նրա իմաստը հասկացվում է ամբողջության մեջ: Այս երևույթը պայմանականորեն անվանում է *կրկնահապավում* կամ *զեղչումով հապավում*²³: Որպես օրինակ բերում է *կենտկում=կենտրոնական կումիտե, տեխնիկում =տեխնիկական մինիում* նն: Զեղչումով հապավում է համարում նաև այն

¹⁶ Տե՛ս Է. Ադայան, *Հնդհանուր և հայկական բառագիտություն*, էջ 298:

¹⁷ Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 168:

¹⁸ Տե՛ս Գ. Սևակ, նշվ.աշխ., նույն տեղում:

¹⁹ Գ. Սևակ, նշվ.աշխ., էջ 171:

²⁰ Տե՛ս Գ. Սևակ, նշվ.աշխ., նույն տեղում:

²¹ Գ. Սևակ, նշվ.աշխ., էջ 172:

²² Տե՛ս Գ. Սևակ, նշվ.աշխ., նույն տեղում:

²³ Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 173:

դեպքերը, երբ հապավման մեջ գեղջված է ոչ թե ամբողջ բառ կամ թեմա, այլ որևէ բառի վերջին կամ միջին մասը: Օրինակ՝ *կոլտընտեսական*, որը կազմված է *կոլտնտեսություն* հապավումից, և որին ավելացել է *-ական*-ը, իսկ *-ություն*-ը դուրս է եկել, այդպիսով ստեղծվել է *կոլտնտեսական* գեղջումով հապավումը²⁴: Ներկայացնում է *տառային* հապավումը, իսկ հաջորդ տեսակի մեջ առանձնացնում է *վանկաբառային*, *վանկատառային*, *տառաբառային* ենթատեսակները՝ համապատասխան օրինակներով²⁵, որոնք հիմնականում պատմաբաններ կամ օտարաբանություններ են այսօրվա տեսանկյունից: Համեմատում է հայերենի և ռուսերենի հապավումները, ցույց տալիս դրանցում թեմաների տարբերությունները՝ պայմանավորված լեզուների ներքին օրինաչափություններով²⁶: Անդրադառնում է նաև հապավումների տեխնիկայի հնչյունաբանական հատկանիշներին, ցույց տալիս, որ դրանք, որպես կանոն, «չըզիտեն հայերենի հնչյունաբանության և սղման կանոնները»: Օր. *լուս* թեման (*լուսավոր* բառից, *լույս* արմատից) *լուսբաժին*, *լուսօրգաններ* և այլ հապավումների մեջ իբրև շեշտագուրկ արմատ կամ բուն գործածվում է երկհնչյունի փոխարեն *ու* ձայնավորով, բառավերջում ևս հանդես է գալիս *լուս* թեման (*ժողլուս*, *քաղլուս* ևն), մինչդեռ այս դեպքում, իբրև շեշտակիր արմատ, այն պետք է հանդես գար լրիվ ձևով և պահպանելով *ույ* երկհնչյունը, ինչպես, ասենք, *արշալույս*, *կիսալույս* ևն²⁷:

Արմատական բառերի քննությունը

Անդրադառնալով արմատական բառերին՝ Սևակը գրում է. «Մեր, ինչպես բոլոր քաղաքակիրթ ազգերի լեզուների մեջ նոր արմատ ստեղծելու, նոր պարզ կամ արմատական բառ հորինելու հնարավորությունը բացառված է. ոչ մի անհատական ուժ կամ հավաքա-

²⁴Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ.աշխ., էջ 174:

²⁵Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ.աշխ., էջ 176:

²⁶Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ.աշխ., էջ 177-178:

²⁷ Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 179-180: Հմմտ. **Գ. Սևակ**, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 182-198:

կան մարմին այսօր ի վիճակի չէ ստեղծելու նույնիսկ մեկ արմատ: Այս նշանակում է, որ քաղաքակիրթ ազգերի լեզուների արմատների թիվը ավելանալ չի կարող»²⁸: Միաժամանակ նշում է, որ բացառություն են *գազ* (այն ստեղծվել է հուլանդացի գիտնական Վան-Հելմոնտը՝ ենթադրաբար *geist* գերմանական արմատից) և հայերենի *սուրճ* արմատները (ենթադրաբար՝ սուրճ խմելու ձայնից հանված՝ 19-րդ դ.-ում)²⁹: Արմատական բառերի ծագումնաբանական դասակարգումն ըստ քանակական տվյալների կատարում է՝ հիմք ընդունելով Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը, ցույց է տալիս, որ ժամանակին հայերի նախահայրերը միայն մեկ արմատով արտահայտել են բազմաթիվ իմաստներ³⁰, ապա խորությամբ քննում է «բառակազմության տեխնիկայի» զարգացման փուլերը³¹: Հանգամանորեն բացատրում է լեզուներում մի քանի արմատից հարյուրավոր և հազարավոր արմատների ստեղծման կամ բառաստեղծման գործընթացը՝ «արաբերենից՝ 7-րդ դարում հայերենին անցած» *կեղն* «գրքի թերթ» բառի օրինակով, որը մեր բարբառներում վերածվել է 12 ձևի (*կեղն*, *կեղեք*, *կլեպ*, *քլեպ* ևն)³²: Չվիճարկելով Սևակի դիտարկումը, որը հայտնի երևույթ է (միննույն արմատից տարբեր պատճառներով նոր արմատների ստեղծումը), է. Աղայանը իրավացիորեն կարծում է, որ Սևակի նշած բառերի կապը չի հիմնավորվում ստուգաբանական տվյալներով, իսկ *կեղն* բառն ամենից առաջ ոչ թե արաբական, այլ ասորական փոխառություն է³³: Աղայանը, չընդունելով Սևակի ստուգաբանությունները, գրում է. «Այս ստուգաբանական շփոթն այնքան անհարիր, այնքան անհամատեղելի է պրոֆ. Գ. Սևակի հետազոտական մեթոդին, որ մեզ համար նույնիսկ ցավալի է խոսել դրա մասին:

²⁸ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 240:

²⁹ Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 240:

³⁰ Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, 143:

³¹ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., 149-158:

³² Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 241:

³³ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 356-357: Հմմտ. Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Խ.Բ, Ե., 1973, էջ 568:

նույնիսկ մակերեսային ծանոթությունը, գոնե, Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» թերթելը, բավական կլիներ այդ շփոթից խուսափելու համար»³⁴։ Ի դեպ, ավելի ուշ Գ. Ջահուկյանը, հիմք ընդունելով բարբառային տարբերակները, հավանական է համարում բառի՝ կ/խ հերթագայությամբ կամ ք/կ անցմամբ ծագումը հնդեվրոպական **(s)kel-* «կտրել», «անջատել» արմատից՝ **keleb-* կամ **kel-ep*³⁵։

Բառաստեղծման տեխնիկայի շուրջ

«Բառաստեղծման տեխնիկան» Սևակը բացատրում է նաև այլ լեզուների՝ ռուսերենի, գերմաներենի օրինակներով, որոնցում, ըստ նրա, հնչյունափոխությունը կամ ձայնադարձությունն ունի միայն հնչյունաբանական, կամ առավել «ձևաբանական-բառափոխական, և ո՛չ թե բառակազմական-բառաստեղծական արժեք», ինչպես՝ *книга-книжки*, գերմաներենում՝ շպրեխեն (խոսել), շրպրախ (խոսեց), գեշպրոխեն (խոսեցնել)։ Իբրև պատահականություն է դիտում *ձիգ>ձգել>զգել>քցել>քից* անցումը՝ որպես նոր արմատի ստեղծում³⁶։ Ըստ Սևակի՝ «... մեր լեզուները բառաստեղծման առաջին, նախնական ստադիայի տեխնիկական՝ հնչյունափոխության կամ ձայնադարձության միջոցով նոր բառեր կերտելու տեխնիկան չեն պահպանել, քանի որ անցել են ավելի բարձր և կատարյալ տեխնիկային»³⁷։ Ըստ նրա՝ «...բառակազմության տեխնիկան մարդիկ ձեռք են բերել հետագա դարաշրջաններում և, իհարկե, հեշտից դեպի դժվարը, պարզից դեպի բարդը գնալու ճանապարհով»³⁸։ Սևակը, հիմք ընդունելով նոր ժամանակների լեզուների տվյալները, որոշել է բառակազմության տեխնիկայի հետևյալ փուլերը. «*օ.հնչյունափոխության միջոցով արմատներ ստեղծելու*

³⁴ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 355։

³⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 398։

³⁶ Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 243։ Հմմտ. Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 143-149։

³⁷ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 244։

³⁸ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 245։

փուլը. ա. նույն արմատի կրկնությամբ բարդ բառեր ստեղծելու փուլը. բ. հարադրական ու կցական բարդությունների փուլը. գ. իսկական բարդությունների փուլը. դ) ածանցումների փուլը»³⁹: Այս տեսության որոշ դրույթներ իրավացիորեն քննադատել է Է. Ադայանը: Ըստ նրա՝ «.... չի կարելի հայերենի մեջ պատմական զարգացման պրոցեսում տեղի ունեցած երևույթները, եթե նույնիսկ դրանք ճիշտ են լուսաբանված, համարել ընդհանրապես լեզվի զարգացման նախնական շրջանին հատուկ երևույթներ, տարածել ընդհանրապես լեզվի զարգացման պրոցեսի վրա և այս կամ այն տեսակետին հանգել. մեզ ավանդված հայերենը, իր նույնիսկ ամենահնատիպ երևույթներով էլ, չի կարող դիտվել որպես նախնական կամ պրիմիտիվ վիճակի արտահայտություն: ինչպես ցույց են տալիս աշխարհի լեզուների տվյալները, այսպես կոչված ներմարմնավորող լեզուների մեջ բացառիկ զարգացման են հասել մասնիկավորումն ու բարդությունը, մինչդեռ կրկնության հետքեր անգամ չեն երևում»: ⁴⁰ Ըստ Ադայանի՝ ժամանակակից լեզվաբանության մեջ խիստ քննադատության է ենթարկվում քերականական միջոցների առաջացման հաջորդականության տեսությունը⁴¹: «*Կցական բարդությունները*, - գրում է Սևակը, - կարող են առաջ գալ շարահյուսորեն իրար հետ կապված ամեն մի գույգ բառից, լինեն նրանք համադասական, թե՛ ստորադասական կապակցության մեջ, այդ միևնույն է, ըստ որում նույնիսկ ենթական ու ստորոգյալը կարող են կազմել կցական բարդություն, ինչպես, օրինակ, *Էջմիածին=էջ (իջավ) միածինը, ովնէ=ով և է և այլն*»⁴²: Ըստ Սևակի՝ «*Իսկական բարդությունը*՝ ավելի բարձր ու վերացական մտածողության արգասիք է թե՛ նրանով, որ այստեղ բաղադրիչները այլևս անկախաբար գիտակցվող բառեր չեն, թե՛ նրանով, որ դրանց շարահյուսական կապը ձևականորեն ու ձևաբանորեն ինքնին վե-

³⁹ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 246: Հմմտ. Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 149-158:

⁴⁰ Է. Ադայան, նշվ. աշխ., էջ 253:

⁴¹ Տե՛ս Է. Ադայան, նշվ. աշխ., էջ 357:

⁴² Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 249:

րացված է, ինչպես նաև նրանով, որ իսկական բարդությունը ըստ էության թեքական (ֆլեկտիվ) բնույթ ունի, այսինքն բաղադրությունը սովորաբար ավելի իմաստ է արտահայտում, քան նրա բաղադրիչները»⁴³: «Եթե այս բոլորին ավելացնենք նաև այն, որ իսկական բարդությունները, որպես կանոն, կազմվում են արմատներից կամ իբրև արմատ գիտակցվող բառածներից, մինչդեռ անիսկական բարդությունները բաղադրվում են անկախ կամ շարահյուսորեն իրար հետ կապված բառերից, և հիշենք, որ արմատի գիտակցումը շատ ավելի բարձր վերացություն է, քան առանձին բառի գիտակցումը, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի, որ իսկական բարդությունը պատմականորեն անպայման պիտի հաջորդեր անիսկական (հարադրական և կցական) բարդություններին՝ հանդիսանալով բառակազմության ավելի բարձր փուլ»⁴⁴: Կարևորում է ա հոդակապի դերը, որը «կարող էր ստեղծվել միայն անիսկական բարդության աստիճանի առկայության դեպքում». վկայակոչում է Մ. Աբեղյանին՝ ըստ որի «ա հոդակապը եղել է մի շարք բառերի արմատական վերջնահնչյունը»⁴⁵: Զուգահեռներ է անցկացնում *օրենսգիրք* բառի *ս*-ի, *տեղ(ի)*, *հյուսիս(ի)* և այլ ձևերի հետ՝ բերելով Աբեղյանի բացատրությունը⁴⁶: Ածանցումը ևս համարում է բառակազմության զարգացման շատ ավելի բարդ աստիճան՝ հետևյալ հիմնավորումներով. ա)Նախ դրանք եղել են արմատներ, որ հնչյունափոխվելով կամ առանց հնչյունափոխվելու այլևս չեն գիտակցվում որպես արմատներ: Մինչդեռ կցական բարդության մեջ բառի բաղադրիչները պահպանում էին իրենց թե՛ նյութական և թե՛ ձևական իմաստը.... իսկ իսկական բարդությունների մեջ կորցնելով հանդերձ իրենց ձևական իմաստը՝ պահպանում էին նյութական իմաստները, ածանցման մեջ նախկին արմատները արդեն զրկվում են իրենց նյութական իմաստից և պահպանում միայն ձև-

⁴³ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 250:

⁴⁴ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 251:

⁴⁵ Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում :

⁴⁶ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 253:

վական իմաստները, որոնց ըմբռնումը շատ ավելի բարձր վերացություն է, քան նույնիսկ իսկական բարդությունների համար էր պահանջվում»⁴⁷: Ըստ Սևակի՝ «.....այս տեսությամբ միաժամանակ հերքվում են այն ենթադրությունները, որ իբր թե հենց սկզբից էլ մարդկային լեզուն ունեցել է ն՝ արմատներ, ն՝ ածանցներ, ն՝ հոլովման ու խոնարհման մասնիկներ (վերջավորություններ), որ նշանակում է, թե մարդկային լեզուն էական զարգացում չի ունեցել: Մեխանիստական, մետաֆիզիկական այդ ենթադրությունները անտեսում են, որ լեզուն անջատական (ամորֆ) ստադիայից կցական (ազլուտինատիվ) ստադիայի վրայով է անցել թեքական (եֆլեկտիվ) ստադիային»⁴⁸: Լեզուներում բառաստեղծման վերոհիշյալ փուլերին համապատասխանեցնում է բառակազմության հետևյալ փուլերը՝ 1.Նախնական անջատական ստադիա-Արմատաստեղծություն հնչյունափոխությամբ և կրկնավորներ: 2.Նախնական կրցական ստադիա-Հարադրություններ, կցական բարդություններ, շատ ուշ՝ իսկական բարդությունների և ածանցումների սաղմնավորում: 3.Թեքական ստադիա-Իսկական բարդությունների և ածանցումների սիստեմ⁴⁹: Խոսում է նաև բառակազմության առանձին եղանակների մասին (*եսիմ<ես ի՞նչ իմանամ*) և ժամանակակից հայոց լեզվի համար առանձնացնում հետևյալները՝ բարդություն, ածանցում, հապավում⁵⁰:

Անիսկական բարդությունները բաժանում է կրկնավոր, հարադրական, բաղիյուսակյան և կցական տեսակների⁵¹: Ամփոփներկայացնում է յուրաքանչյուրը, կրկնավորների մեջ՝ գոյականների, ածականների, թվականների, դերանունների, բայերի («բայերը կրկնավոր են լինում այն դեպքում, երբ բայի հարադիրը կրկրնվում է, իսկ բուն բայը, որ սովորաբար վերացական է լինում, մնում

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 254:

⁴⁹ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 255:

⁵⁰ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 256:

⁵¹ Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում: Հմմտ. Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 166:

է առանց կրկնվելու, այսպէս՝ *թափալ թափալ լինել, գլոր գլոր տալ, վեր վեր թռչել* են»), մակբայների կրկնությամբ կազմված բառերը⁵²: Ըստ Սևակի՝ կապերից (իսկական), շաղկապներից և ձայնարկություններից կրկնավորներ չեն լինում⁵³, թէև ձայնարկությունների դեպքում այդպէս չէ (*հե՛յ-հե՛յ, վա՛հ-վա՛հ* են⁵⁴): Բարդության պարզագույն տեսակն է համարում հարադրական բարդությունները⁵⁵: Դրանք կարող են կազմված լինել և՛ լրացում-լրացյալից, և՛ համադաս անդամներից ու նույնիսկ միևնույն բառերի կրկնությունից: Դրանց մի մասը այլաբերական և փոխաբերական իմաստ է ստացել և վերածվել յուրահատուկ անթարգմանելի դարձվածի (իդիոմի)⁵⁶: Նկատում է՝ հարադրությունների մեծագույն մասը կազմված է բաղադրիչների ամենաբազմազան հարաբերությամբ: 1. Երկու անկախ բայից, որոնցից յուրաքանչյուրն առանձին խոնարհվում է, օր.՝ *գնալ-գալ- գնաց եկավ* են: 2. Ամեն մի ներգործական բայից և *տալ* բայից՝ *բերել տալ, գրել տալ* են: 3. *Անել ու լինել* բայերով ու որևէ հարադրով, ըստ որում այս դեպքում *անել* ու *լինել* բայերը այլևս չեն նշանակում իրոք անել ու լինել, «այլ իրենց հարադրի հետ միասին նշանակում են մի որևէ բայական իմաստ, օր.՝ *միտք անել՝ մտածել* են: 4. Հայերենի բայերի մեծագույն մասը սակայն կազմված է շարժում ցույց տվող բայերից ու տեղ ցույց տվող որևէ բառից: Դրանք հիմնականում կազմվում են մեծ մասամբ *գնալ, գալ, բերել, տանել...* են բայերից և *առաջ, դեն, դես, դուրս...* են հարադիրներից՝ *դեն ձգել, դեն նետել...* են: Մի տեսակ է բաղիյուսական հարադրությունը, որի «հարադրվող տարրերը» անպայման իրար նկատմամբ համադոր են ու համադաս, կապվում են ու կամ *և* շաղկապով՝ *ահ ու դող, ցիր ու ցան* են: Բոլոր տեսակի հարադրությունները դիտվում են որպէս մեկ բառ, հոլովվում է վերջին բաղադրիչը: Հնարավոր է նաև առաջին բաղադրիչի հոլո-

⁵²Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 258:

⁵³Տե՛ս **Գ. Սևակ**, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, էջ 258:

⁵⁴Տե՛ս **Ա. Սուքիասյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 272:

⁵⁵**Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 258-259:

⁵⁶Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 259:

վում, բայց այդ դեպքում այն ընդունում է միայն սեռական հոլով⁵⁷: Քննելով կցական բարդությունները՝ ցույց է տալիս դրանց առաջացումը և՛ կրկնավորներից, և՛ պարզ հարադրություններից, և՛ բաղ-
 հյուսական հարադրություններից: Կրկնավորներից՝ ա)փայլփլել
 (փայլ+փայլել), ջրջրուկ (ջուր+ջուրուկ), բ)ամանչաման (աման+
 աման), գ)կսկիծ (կիծ+կիծ), դ)առոքփառոք (փառոք+փառոք)⁵⁸:
Հարադրական բարդություններից կազմված կցականներ. ենթա-
 կա-ստորոգյալով կազմված՝ *Էջմիածին, ովկիցե* ևն, որոշիչ-որոշ-
 յալից՝ *այսօր, այդտեղ* ևն, հատկացուցիչ-հատկացյալից՝ *հորեղ-
 բայր, մորեղբայր* ևն: Կցական բարդություն կարող է կազմվել նաև
 համադաս բառերից՝ *դեմհանդիման (դեմ հանդիման), ժամառժամ
 (ժամ առ ժամ)* ևն⁵⁹: *Բաղհյուսական հարադրություններից* շատերը
 հակվում են դեպի կցական բարդություն և վերածվում մեկ բառի՝
նիստուկաց, սոնտուր ևն⁶⁰:

Ածանցման և բառի բաղադրիչների քննությունը

Քանի որ ածանցումը, ինչպես տեսանք, բառակազմության տեխնիկայի զարգացման համեմատաբար բարդ աստիճան է հա-
 մարում, և որպես կանոն այն հաջորդել է անիսկական (կրկնավոր, հարադրական ու կցական) և իսկական բարդություններին, ըստ Սևակի՝ ածանցում ունեն և կարող են ունենալ միայն այն լեզու-
 ները, որոնք հասել են զարգացման այնպիսի աստիճանի, որ ար-
 դեն ունեն միայն վերաբերական իմաստ արտահայտող հատուկ
 ձևություններ, այսինքն՝ ածանցներ (աֆիքսներ)⁶¹: Որպես օրինակ է
 բերում *-որդ, -ավոր, ան-* ածանցները, որոնցից ոչ բոլորի ժամանա-
 կին ունեցած իմաստը կարելի է վերականգնել⁶²: Ցույց է տալիս
 բոլոր հնարավոր ուղիները, որոնցով արմատները վերածվել են ա-

⁵⁷ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 259-262:

⁵⁸ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 262-263:

⁵⁹ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 264-267:

⁶⁰ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁶¹ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 267:

⁶² Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 268:

ծանցների. Ա.Արմատի իմաստի մթագնում (*-որդ*-ին ավելացնում է *-արդ*, *-աբար*, *-բար*, *-որեն*, տալիս է սրանց ծագումը): Այդ կարգի են նաև *-վար*, *-հար*, *-գործ*, *բաց*-, *թեր*-, *գեր*- են⁶³: Բ. *Հոլովի իմաստի մթագնում*: Օր.՝ սեռականի *ի*-ն (*աղի*), *-աց*-ը, *-ից*-ը, *ոց*-ը (հոգն.), գործիականի *իւ*-ը մեր օրերում ածանցներ են (*ռուսաց*, *հայոց պարսից*, ածականները, *խստիւ*, *հազիւ* մակբայները են): Այդպես նաև՝ *-ոք* (*օք*) *խելոք*, *տեսոք* բառերի մեջ գիտակցվում է որպես ածանց⁶⁴: Գ.«Արմատների հնչյունափոխությունը, գիտակցված կամ պատահական, առաջացրել է մեր լեզվի մեջ մի շարք ածանցներ»⁶⁵: Որպես օրինակ է բերում *արտ*-, *ներ*-, *տար*-, *-ատ*, *-ոտ* են: Սրանց մեջ ներկայացնում է նաև հունարան դպրոցի ստեղծած նախածանցները՝ *նշելով*, որ «նրանց մի մասը հաստատուն կերպով մըտավ մեր լեզվի մեջ և մեծ ճկունություն տվեց նրան մանավանդ գիտական տերմիններ ստեղծելու գործում»⁶⁶: Ըստ Սևակի՝ ածանցների «մեծագույն մասը, ընդհակառակը, առաջացել է նախագրային շրջանում, այն էլ պատահական հնչյունափոխությամբ, և հենց այս հանգամանքն էլ դժվարացնում է նրանցից շատերի ծագման ճշտումը»⁶⁷: Որպես այդպիսիք ներկայացնում է *-ցի*, *-տ*, *-ած*, *-վ*, *ան*- և այլ ածանցներ: Նկատում է, որ «....որ առանձին ածանց փոխ առնել համարյա չի կարելի. ածանց փոխառելուն սովորաբար նախորդում է նույն ածանցով կազմված մի շարք բառերի փոխառությունը, որոնց մեջ փոխառու լեզուն սկսում է զգալ ածանցի ու արմատի իմաստները առանձին-առանձին»⁶⁸: Դրանք «....սովորաբար, մանավանդ սկզբնական շրջանում, բառաստեղծական մեծ տարածում չեն ունենում փոխառու լեզվի մեջ, երբեմն էլ մնում են միայն փոխառյալ մի քանի բառի մեջ կամ մոռացվում: Այսպես՝ պարսկերենից *դժ*՝ ածանցով մենք որևէ նոր բառ ստեղծել չենք

⁶³ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 269-271:

⁶⁴ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 271-272:

⁶⁵ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 273:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 274:

⁶⁸ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 275:

կարող, և նա մնացել է միայն *դժբախտ, դժգոհ* և մի երկու այլ բառի մեջ»⁶⁹:

Անդրադառնում է նաև աճականներին, որոնք, ըստ Սևակի, շատերը որպես ածանց են դիտարկում, ճիշտ է, դրանք «երբեմն կարող են փոխել բառի իմաստը (օրինակ՝ *փափիլիկ*-դուրեկան, փափուկ....նն), բայց դա բխում է ո՛չ թե աճականի իմաստից, այլ նրա պատահական առկայության օգտագործումից, այնպես, ինչպես որ երբեմն հնչյունափոխությունն էլ օգտագործվում է իբրև իմաստի տարբերակման միջոց, օրինակ՝ *քերել* և *քորել*, *անհայտ* և *անհետ*, *ծախք* և *ծախս*, *լուրջ* և *լուրթ* են»⁷⁰: Քննելով *ձևի* և *ձևույթի* ընկալման հարցը՝ գրում է, որ լեզվի իմաստային-հնչյունական նվազագույն միավորը ձևույթն է⁷¹, մինչդեռ «Ձև (ֆորմա) ասելով հասկանում ենք լեզվական յուրաքանչյուր իրողության կամ արտահայտության արտահայտչական կողմը, դրսևորման միջոցը, այն եղանակները, որոնց միջոցով դրսևորվում է լեզվական յուրաքանչյուր արտահայտություն, լինի նա խոսք, նախադասություն, բառ, ածանց և այլն»⁷²: «Ձևույթ (մորֆեմա) ասելով՝ հասկանում ենք ոչ թե սոսկ ձև՝ վերացված, կտրված իր բովանդակությունից, գրում է Սևակը, այլ լեզվի նվազագույն այնպիսի միավոր, որը հանդիսանում է թե՛ ձև, թե՛ բովանդակություն, կամ այլ ձևով ասած՝ ունի և՛ ձև, և՛ բովանդակություն»⁷³, և բերում է *սիրտ-սրտոտ* բառերի օրինակը: Է. Աղայանի վկայությամբ՝ «....Ղափանցյանի մոտ հնչույթի և հնչյունի բնորոշումը դեռևս խիստ տարտամ է ու ոչ հստակ: Ահա, Գ. Սևակը, հայ լեզվաբանների մեջ երկրորդն էր, որ զբաղվեց հրնչույթի ու հնչյունի տեսությամբ և իր ժամանակի համար զարգացման հնարավոր մակարդակին հասցրեց այն»⁷⁴: Ձևույթի հարցում ևս «....առաջին խոսքը Գ. Ղափանցյանն է ասել, ըստ որում

⁶⁹ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 275-276:

⁷⁰ Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁷¹ Տե՛ս Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 201:

⁷² Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., 202:

⁷³ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁷⁴ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 357:

ձևույթի սահմանումը նրա մոտ շատ ավելի ամբողջական է, քան հնչույթինը: Եվ այստեղ էլ, նրանից անմիջապես հետո, Գ.Սևակն էր, որ առավել հստակությամբ շարադրեց ձևույթի տեսությունը⁷⁵: Սևակը ձևույթները բաժանում է հիմնական և երկրորդական տեսակների⁷⁶, տալով հետևյալ բացատրությունը. «*Ձրր* ձևույթը (արմատը) որտեղ որ լինի, մեզ ակնարկում է ջրի հետ կապված ընդհանուր իմաստ, առանց կոնկրետացնելու և ցույց տալու, թե դա *ջուր* առարկա՞ն է (եզակի՞, թե՞ հոգնակի, ի՞նչ հոլովով, այսինքն՝ ի՞նչ կապի մեջ այլ առարկաների հետ), ջրի հետ կապված գործողությունն է (ի՞նչ ժամանակով, դեմքով, ձևով են-այսինքն՝ ի՞նչ մեջ այլ առարկաների և ո՞ր առարկաների հետ), թե՞ ջրին հարաբերող մի ուրիշ առարկա է (ի՞նչ հարաբերության մեջ այլն): Այդ իսկ պատճառով էլ *ջրր* ձևույթը իր իմաստը կոնկրետացնում, մասնավորում է բառի մեջ՝ կապվելով ուրիշ ձևույթների (արմատների, ածանցների վերջավորությունների) հետ»⁷⁷: Երկրորդական ձևույթները բաժանում է երկու տեսակի՝ *իրահարաբերական* (նաև *բառաստեղծական* կամ *բառակազմական*, ինչպես Ղափանցյանն էր անվանում⁷⁸), երբեմն էլ՝ ձևաբանական, որովհետև հաճախ ձևաբանական արժեք ունեն և ուսումնասիրվում են ձևաբանության մեջ՝ բառակազմության բաժնում: Ըստ Սևակի՝ «Բառահարաբերական կամ բառափոխական ձևույթներ են հոլովման և խոնարհման բոլոր վերջավորությունները, բոլոր շաղկապները և կապերը»⁷⁹: Արմատը սահմանում է որպես «....բառի նյութական իմաստ պարունակող ձևույթ...., որպիսին բառի մեջ կարող է լինել թե՛ մեկ, թե՛ ավելի»⁸⁰: «Հնչյունափոխության ենթարկված արմատը կոչում ենք բուն կամ արմատի տարբերակ»⁸¹, որն «....իբրև արմատական բառ

⁷⁵ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 358:

⁷⁶ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 202-203:

⁷⁷ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 203:

⁷⁸ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 359:

⁷⁹ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 206:

⁸⁰ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 216:

⁸¹ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

հանդես գալ չի կարող, նա միշտ միացած է լինում այլ ձևայթների հետ և գտնվում է կամ բառակազմում, կամ բառամիջում, բայց ոչ երբեք՝ բառավերջում: Հայոց լեզվում հնչյունափոխության չենթարկվող արմատները բուն չունեն և միշտ հանդես են գալիս արմատական ձևով⁸²: Քննելով *հիմք* և *վերջավորություն* հարաբերակցությունը՝ գրում է, որ վերջավորությունները թեքված բառի բառափոխական ձևայթներն են իսկ թեքված բառի մեջ մինչև վերջավորությունն ընկած մասը կոչվում է հիմք⁸³: Ըստ Սևակի՝ հայերենում բառերը կարող են իրենց բառահարաբերությունը դրսևորել երեք ձևով՝ ա) Ձևականորեն առկա որևէ վերջավորությամբ՝ *քար-ի* նն», բ) Զրո վերջավորությամբ կամ բացասական վերջավորությամբ՝ *գնաց+0*, գ) Զրո վերջավորության արժեք ունեցող *ք* վերջավորությամբ՝ *ուրք* նն: Քննում է նաև բաղադրության և բաղադրիչների հարցը: Բաղադրյալ է համարում այն բոլոր բառերը, որոնք բաղադրված են մեկից ավելի ձևայթներից՝ նշելով, որ բաղադրյալ բառի կազմությանը չեն կարող մասնակցել բառահարաբերական ձևայթները: Բաղադրյալ բառերը բաժանում է բարդ, ածանցավոր և բարդաածանցավոր տեսակների⁸⁴: Բարդ բառերը բաղադրված են մեկից ավելի հիմնական ձևայթներից (կամ արմատներից): Բաղադրյալ բառերի մեջ հաճախ ձևայթների արանքն է ընկնում *ա* հընչյունը, որը կոչվում է հոդակապ⁸⁵: Ածանցավոր են կոչվում այն բառերը, որոնք բաղադրված են մեկ հիմնական ձևայթից և մեկ կամ ավելի բառակազմական ձևայթից⁸⁶: «Բարդաածանցավոր են կոչվում այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի հիմնական ձևայթներից (արմատներից) և մեկ կամ ավելի բառակազմական ձևայթից (ածանցից), օր.՝ ան-գրա-գետ»⁸⁷: Այն բոլոր ձևայթները, որոնք բաղադրում են բառը, կոչվում են *բաղադրիչներ* (*կոմպոնենտ-*

⁸² Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 217:

⁸³ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 219:

⁸⁴ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 220:

⁸⁵ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁸⁶ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 221:

⁸⁷ Տե՛ս Գ. Սևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

ներ), իսկ հիմնական կամ հիմնական և բառակազմական ձևությո-
ներով բաղադրված բառը կոչվում է *բաղադրյալ* կամ *բաղադրույթ-
յուն (կոմպոզիտ)*⁸⁸: Կարևոր է Սևակի հետևյալ դիտարկումը. «Բա-
ղադրյալ բառերի մեջ յուրաքանչյուր բաղադրիչ անպայման պետք
է հակադրվի մյուս բաղադրիչներին՝ ամբողջ բառին ավելացնելով
կամ տալով յուր սեփական իմաստը»⁸⁹: Այլապես այն բաղադրյալ
չէ: Բերում է հետևյալ օրինակները. *տն+ակ=փոքր տուն, բայց դան
+ակ չի նշանակում փոքր դանակ*: Ընդունում է յոթ դերբայ՝ առանց
համակատարի⁹⁰: Ածանց է համարում ոչ միայն անորոշի *-ալ* և *-ել*
վերջավորությունները, այլև անկատարի *իս* և *ուս*, վաղակատարի
ել, հարակատարի *ած*, ապառնիի *ու*, ենթակայականի *ող* վերջավո-
րությունները: Ժխտականի համար գրում է, որ այն ձևավորվում է
անորոշի *լ*-ի անկումով, իսկ *ել* լծորդության բայերից՝ *լ*-ի անկումով
և *ե*-ն *ի*-ի վերածելով⁹¹:

Եզրակացություն

Ամփոփելով բառակազմության հարցերի քննությունը Գ. Մե-
վակի աշխատություններում՝ հարկ է նշել, որ լեզվաբանը բառերն
ըստ կազմության բաժանում է 4 տեսակի՝ պարզ, ածանցավոր,
բարդ, բարդաձանցավոր: Առանձնացնում է բառակազմության
տեխնիկայի հետևյալ փուլերը՝ հնչյունափոխության միջոցով ար-
մատների ստեղծման, նույն արմատի կրկնությամբ բարդ բառեր
ստեղծելու, իսկական բարդությունների, ածանցումների: Հանգա-
մանորեն քննում է հապավումները՝ որպես նորագույն տեխնիկա:
Մշակում և զարգացնում է *ձևույթի* տեսությունը: Բացի թեքման
վերջավորություններից, բառահարաբերական է համարում նաև
կապերն ու շաղկապները: Ժամանակակից հայոց լեզվի համար
առանձնացնում է բառակազմության հետևյալ եղանակները՝ *բար-*

⁸⁸ Տե՛ս Գ. Մևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁸⁹ Տե՛ս Գ. Մևակ, նշվ. աշխ., նույն տեղում:

⁹⁰ Տե՛ս Գ. Մևակ, նշվ. աշխ., էջ 295:

⁹¹ Տե՛ս Գ. Մևակ, նշվ. աշխ., էջ 295-303:

դություն, ածանցում, հապավում: Անիսկական բարդությունները բաժանում է կրկնավոր, հարադրական, բաղիյուսական և կցական տեսակների: Պարզագույն տեսակ է համարում հարադրական բարդությունները: Ածանցումը համարում է բառակազմության տեխնիկայի զարգացման համեմատաբար բարդ աստիճան, որը, որպես կանոն, հաջորդել է անիսկական և իսկական բարդություններին: Ներկայացնում է ածանցների առաջացման բոլոր հնարավոր ուղիները, անդրադառնում է նաև աճականներին:

Օգտագործված գրականություն

Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1973:

Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1962:

Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Ե., 1984:

Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1989:

Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, ԳԱ հրատ., Ե., 1948:

Գ.Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955:

Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Nersisyan Varsik- Study of word-formation issues in the works by Gurgen Sevak.- The given paper touches upon Gurgen Sevak's approaches and theoretical argumentation concerning various issued of word-formation of the Armenian language. As it is mentioned in the paper, Gurgen Sevak distinguishes 4 types of words according to their morphemic structure: simple, affixational, compound, compound-affixational. Gurgen Sevak suggests 4 techniques of word building: the stage of forming roots by means of alteration, the stage of forming compound words by means of reduplication, the stage of forming compound words, the stage of affixation. In the works by G. Sevak abbreviation is viewed as a new techn-

ique. G. Sevak has also studied and completed the theory of the morpheme. According to his theory all morphemes fall into two groups: major and minor. Among minor morphemes he distinguishes inflectional and derivational morphemes. Several conjunctions are also inflectional morphemes according to Sevak's theory. Sevak considers affixation as a complex stage of word building. In the works by Gurgen Sevak all possible ways of forming affixes have been presented.

Keywords: word-formation techniques, stages of word building, morphemes, abbreviation, compound-affixational words, determinative.

Nersisyan Varsik- PhD in Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Нерсисян Варсик-Анализ проблем словообразования в трудах Гургена Севака.-В статье представлены подходы и теоретическое обоснование Г. Севака относительно различных проблем словообразования армянского языка. В статье отмечается, что Гурген Севак делит слова на 4 вида (по составу): простые, аффиксальные, сложные, сложно-аффиксальные. Г. Севак выделяет следующие техники образования слов: стадия создания корней путем чередования, стадия образования сложных слов путем повтора корней (редупликация), стадия образования сложных слов, стадия аффиксации. В трудах Г. Севака детально рассматривается аббревиация как новейшая техника. Исследователем также рассмотрена и дополнена теория морфем, которые он подразделяет на основные и второстепенные, выделяя среди последних формообразующие и словообразующие морфемы. Кроме окончаний, к формообразующим морфемам он относит и некоторые союзы армянского языка. Г. Севак рассматривает аффиксацию как сложную ступень словообразования. В трудах Г. Севака представлены все возможные способы образования аффиксов.

Ключевые слова: техники словообразования, стадии создания слова, морфемы, аббревиация, сложно-аффиксальные слова, детерминатив.

Нерсисян Варсик, кандидат филологических наук, Институт языка им. Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

ՆԱԽԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՍՎԱԾՔԸ*

DOI: 10.54412/2738277X-2023.1.19-70

Վարդանյան Արտակ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. artva@list.ru

Բանալի բառեր. Նախիջևանի խոսվածք, Արարատյան բարբառ, Խոյի բարբառ, Թավրիզի բարբառ, Աստապատի խոսվածք, խառը խոսվածք:

Նախաբան

Պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի *Նախիջևան* քաղաքի անունը հայ իրականության մեջ կապվում է Աստվածաշնչում հիշատակված համաշխարհային ջրհեղեղի (*Ծննդոց*, 2.1-Ժ.32) հետ և համարվում է Հայաստանի հնագույն բնակավայրը, որը Ք. ա. 3669 թվականին հիմնադրել է Նոյ նահապետը¹: Ըստ ավանդության՝ Նոյը, փրկվելով ջրհեղեղից, Արարատ լեռան գագաթից իջել է Փոքր Մասիսին մերձակա հարթավայրը և իջևանել մի վայրում, որը հետագայում կոչվել է *Նախիջևան* («առաջին նախնական իջևան»): Այս ավանդությունը գոյություն է ունեցել ոչ միայն հայերիս, այլև մեր հարևան ժողովուրդների մեջ, օրինակ՝ ազգությամբ հրեա, անտիկ շրջանի պատմիչ *Հովսեպոս Փլավիոսը* (*Հովսեփ Բեն Մաթաֆիա*) դեռևս Ք. հ. 1-ին դարում իր «Հրեական հնախոսություն» երկում² հիշատակել է ոչ միայն ավանդությունը,

* Ներկայացվել է 10.05.2023, գրախոսվել՝ 16.06.2023:

¹ Մ. Չամչյան, *Պատմություն հայոց*, Վենետիկ, 1784, էջ 52-60:

² F. Josephus, *Antiquitates Judaicae*, I. 92.

այլև Նախիջևան տեղանվան հունարեն ձևը՝ *Αποβατήριον* (*Ապո-վատերիոն*)¹ (բառացի՝ «իջևան»):

Նախիջևան քաղաքի մասին հայերեն գրավոր հնագույն հիշատակություններն առկա են պատմահայր Մովսես Խորենացու² և Փավստոս Բուզանդի³ երկերում. երկու պատմիչներն էլ հիշատակել են *Նախճաւան* ձևով:

Օտար պատմագիրներն իրենց երկերում Նախիջևանը հիշատակել են հայերեն անվանումից ածանցյալ տարբերակներով՝ հույները նաև *Ναξοβάνα* (*Նաքսուանա*), արաբները՝ نشوى (*Նեշնի*), نشوى (*Նեշուի*), պարսիկները՝ نخوا (*Նախուա*), نشوا (*Նաշուա*), نخجوان (*Նախջևան*), نقش جهان (*Նաղշ ջահան*): Բոլոր անվանումների հիմքում, անշուշտ, հայերեն *Նախճավան* կամ *Նախիջևան* ձևերն են:

Նախիջևանի մարդկային քաղաքակրթության հնագույն բնակավայրերից մեկը լինելու մասին են վկայում նոր քարի դարաշրջանից մինչև այսօր նրա մերձակայքում գործող աղի հանքը, քաղաքից ոչ հեռու գտնվող Մոխրաբլուր (Քյուլթափա) և Շորբլուր (Շորթափա) բազմաշերտ բնակատեղիները (Ք. ա. 5-1-ին հազարամյակ) և այլ հնավայրեր: Դրանք խոսում են այն մասին, որ հինավուրց այս քաղաքի տարածքում մարդը բնակվել և մշակույթ է ստեղծել վաղնջական ժամանակներից:

Նոյ նահապետի՝ ջրհեղեղից հետո Նախիջևանում իջևանելու և այնտեղ թաղված լինելու մասին են վկայում ինչպես հայ, այնպես էլ այլազգի պատմիչների ու մատենագիրների վավերագրերը⁴: Իսկ մինչև անցյալ դարի 30-ական թվականները քաղաքի բերդի պարիսպների մոտ պահպանվել էր Նոյի գերեզմանը, որի վրա կառուցված մատուռը ուխտատեղի էր ոչ միայն քրիստոնյաների, այլև այլադավանների համար⁵:

¹ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Ե., 1991, էջ 951-953:

² Մ. Խորենացի, *Պատմութիւն հայոց*, Ե., 1981, էջ 98:

³ Փ. Բուզանդ, *Պատմութիւն հայոց*, Ե., 1987, էջ 267:

⁴ Ղ. Ալիշան, *Միսական*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 496-497:

⁵ А. Варданян, *Зов Вишапаса*, Ереван, 2010, с. 65-68.

Ուսումնասիրողները Նախիջևան տեղանվան ստուգաբանության տարբեր վարկածներ են առաջարկում: Ումանք կապում են հայերեն *նախճիր* («որս, կոտորած») և *ավան* բառերի հետ⁶, այսինքն՝ բառացի ստուգաբանվում է որպես «որսատեղի, որսավան», մանավանդ, որ քաղաքը գտնվում է Արաքսի հովտում, և նրա մերձակայքը պատմականորեն հայտնի է եղել որպես նշանավոր որսատեղի: Շումերագետ Արմեն Դավթյանը տեղանվան առաջին արմատը համարում է գրաբարի *նախիճ* («որովայն, փոր») բառը⁷, որը նույնպես հնարավոր տարբերակ կարող է համարվել՝ հաշվի առնելով տարածքի՝ Արաքս գետի գոգավոր հովտում տեղադրված լինելու փաստը, ինչպես նաև պատմականորեն *փոր*, *փոս*, *ձոր* և նման արմատներով աշխարհագրական անունների առատությունը Հայկական լեռնաշխարհում (Փոր, Փորակ, Փորակուտ, Փորադաշտ, Չորափոր, Փոս, Փոսա, Փոսիկ, Այգեձոր, Չորագյուղ, Չորագավառ և այլն): *Նախիջևան* բնականվան ստուգաբանությանը անդրադարձել է նաև Գևորգ Ջահուկյանը՝ կապելով հյուսիսկովկասյան նախյան ցեղերի նախնի *նախճ* ցեղանվան հետ («նախճերի ավան»)՝⁸, որը համեմատելի է չեչենների *նոխճ* ինքնանվանման հետ: Վլադիմիր Մինորսկին նույնպես *Նախիջևանը* դիտում է որպես *Գուրջիվան* («վրացիների ավան, վայր»), *Քուրդիվան* («քրդերի ավան, վայր») և նման այլ տեղանունների համաբանությամբ անհայտ ցեղանուն և հայ-իրանական *ավան* (*վան*) արմատը կրող կազմություն⁹: Հայնրիխ Հյուբշմանն էլ հակված է եղել տեղանունը դիտելու որպես հայերեն *ավան* բառից և հարցականով նշված *Նախիճ* կամ *Նախուճ* հատուկ անունից կազմված բարդություն («Նախիճի կամ Նախուճի ավան»)՝¹⁰:

⁶ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Գ, Ե., 1977, էջ 422:

⁷ Նույն տեղում:

⁸ **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 443:

⁹ **В. Минорский**, *История Ширвана и Дербенда IX-XI веков*, М., 1963, с. 33-34.

¹⁰ **Հ. Հյուբշման**, *Հին հայոց տեղոյ անունները*, Վիեննա, 1907, էջ 385:

Հայագիտության մեջ գրեթե անվերապահորեն ընդունված է այս տեղանվան նախնական ձև համարել *Նախճավան*-ը (*Նախճաւան*), իսկ *Նախիջևան*-ը՝ ժողովրդական ստուգաբանությամբ նրանից ածանցյալ տարբերակ: Մակայն, ուսումնասիրելով տարածքի տեղաբնիկ բարբառների ընձեռած նյութը, չենք բացառել նաև հակառակ վարկածը¹¹, քանզի ոչ շեշտակիր վանկում *խ* հընչունի անկման հետևանքով *Նախիջևանը* կարող էր դառնալ *Նախջևան*, ապա կից բաղաձայնների փոխադրեցական հնչյունափոխությամբ՝ *Նախճևան* (ինչպես աղջիկ> *ախճիկ*//*ախճիգ*, աղցան> *ախճան*, դաղձ>*տախձ(ը)*//*տսնիսձ(ը)*, մաղձ> *մախձ(ը)* և այլն), այնուհետև՝ ձայնավորների ներդաշնակությամբ՝ *Նախճավան* (*Նախիջևան*>*Նախջևան*>*Նախճևան*>*Նախճավան*):

Պատմական հանգամանքների բերումով բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, ասպատակությունների և ավերումների (մասնավորապես՝ 1603-1604թթ. շահաբբայան բռնագաղթ, 1828թ. ռուս-պարսկական պատերազմ, 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումներ, 1918-20թթ. հայ-թուրքական պատերազմներ և հայ-ադրբեջանական ընդհարումներ և այլն)՝ Նախիջևանի տարածքի բնակավայրերը, մասնավորապես՝ Նախիջևան քաղաքը, ձեռք են բերել բարբառային բազմաշերտություն:

20-րդ դարում քաղաքը մշտապես ունեցել է առավել կամ նրվազ թվով հայ բնակչություն: 1988 թվականի վերջնական հայաթափման նախօրյակին Նախիջևանն ուներ շուրջ 500 հայ բնակիչ: Բնակչությունը բաղկացած էր ոչ միայն հնաբնակների, այլև Խոյ-Սալմաստից, Թավրիզից, մերձակա Աստապատ գյուղից, շրջակա տեղաբնիկ գավառներից 19-րդ դարում ներգաղթած հայերի սերունդներից: Այս պատճառով էլ քաղաքի խոսվածքը, թեև հիմքով Արարատյան բարբառի խոսվածք էր, այնուամենայնիվ, կրում էր

¹¹ Ա. Վարդանյան, «Նախիջևան» տեղանվան ստուգաբանության շուրջ-Գ. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2017, էջ 367-374:

նան մերձակա բարբառների որոշ հատկանիշներ: Միևնույն խոսվածքն էր գործածվում նաև քաղաքին մերձակա Այլապատ գյուղում:

Նախիջևան քաղաքի խոսվածքը ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել ենք 1987-1991 թվականներին (ԼԻ արխիվ, տետր հ. 445) բարբառախոսներ Միմոն Բաբայանից (ծնվ. 1908թ.), Հարություն Մկրտչյանից (ծնվ. 1916թ.), Ռուբեն Մարտիրոսյանից (ծնվ. 1917թ.), Հերիքնազ Մեհրաբյանից (ծնվ. 1948թ.):

Սույն հոդվածում կանոնադառնանք առավելապես խոսվածքի այն բարբառային հատկանիշներին, որոնք այս կամ այն չափով շեղվում են Արարատյան բարբառից:

Հոդվածի արդիականությունն այն է, որ վերհանվում են այսօր արդեն իսպառ հայաթափված Նախիջևան քաղաքի խոսվածքի հատկանիշները: Նորույթը և նպատակը չուսումնասիրված այս խոսվածքի առանձնահատկությունները առաջին անգամ ներկայացնելն են: Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

Հնչյունաբանական դիտարկումներ

Նախիջևանի խոսվածքի հնչյունական համակարգը ունի 42 հնչյուն՝ 33 բաղաձայն, 9 ձայնավոր: Գրական հայերենի հնչյուններից տարբերվում են *ü, ö, ïi* քմային ձայնավորները, *q, kʰ, p* քմային բաղաձայնները:

Խոսվածքը ունի բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ՝ բառասկզբում ձայնեղ պայթականները և պայթաշփականները վերածվում են համապատասխան խուլերի (գնալ>*կընալ*, գալ>*կալ*, բոնել>*պըռնել*, բուռ>*պոռ*, ջուր>*ճուր*):

Աճառյանի օրենքը հիմնականում գործում է (բանջար> *պյանջար*, գարի>*կյարի*, դատարկ>*տյոռտյակ*, դանակ>*տյանյակ*, ձագար>*ծյար*):

Գ, կ, ք հետնալեզվային բաղաձայնները բառասկզբում և բառամիջում առաջին շարքի *է, ի, ձ, օ, ու* ձայնավորներից առաջ վերածվել են իրենց քմային տարբերակներին (*կ'ւմ, կ'ինդ, ք'երէլ, ք'էնի, մանգ'էդ, գ'իլմս*):

Բառային շեշտի դիրքը վերջնականակային է՝ *մատանի՛, կատո՛ւ, հնչիվօրէ՛լ, հավատա՛լ, ծարավէ՛լ, ուրախութո՛ւն* և այլն:

Բառաթեքման ժամանակ բնորոշ է շեշտազրկված ձայնավորների պահպանումը՝ *վիգ-վիգի, ճո՛ւր-ճո՛ւրի//ճըրի, թու՛թ-թութի, կուժ-կուժի, ցուռտ-ցուռտի//ցըռտի, մեղու-մէղույի, լեզու-լէզույի, տէր-տէրի, մախաթ-մախաթի* և այլն:

Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց առկա է *կ* (ինչպես Խոյի և Թավրիզի բարբառներում)՝ *կօլ* («կողմ»), *կազմա* («քունգ»), *կայիշ* («գոտի»), *կազ* («սագ»), *կալմաղալ* («աղմուկ»), *կափաղ* («կափարիչ»), *կօչ* («խոյ») և այլն:

Ճ հնչյունն առկա է միայն օտար բառերում՝ *ֆւնհէլ* («հասկանալ, ըմբռնել»), *ֆւնդ* («հնարք»), *ֆւնսր* («լապտեր»), *ֆերմա, ֆըլան* («այսինչ») և այլն:

Ձևաբանական դիտարկումներ

Հոգնակերտ մասնիկներից հիմնականում կիրառական են *էր, նէր* մասնիկները (*աշկ-աշկէր, թուշ-թըշէր, ծո՛ւ-ծոյէր, կյան-կյանէր, նուռ-նուռէր, հառս-հատսնէր, կատու-կատունէր, էրէխա-էրէխանէր, աստըդ-աստըդնէր*): Անգամ եզակի դեպքերում կիրառվող *իք* և *անիք* հոգնակերտներին զուգահեռ օգտագործվում է նաև *նէր* մասնիկը (*մառթ-մառթիք//մառթիքնէր, կընիկ-կընանիք//կընիկնէր*):

Հոլովման համակարգում հիմնականում կիրառական է *ի* հոլովիչը (*ծէռ-ծէռի, մէշկ-մէշկի, աղվէգ-աղվէգի, առծիվ-առծիվի, կատու-կատույի, անուն-անունի, տուն-տունէրի//տընէրի, նուռ-նուռի//նըռան, անէր-անէրի, քուր-քուրի, ընգէր-ընգէրի, տէր-տէրի,*

քամի-քամիի, քնսիբություն-քնսիբությունի, Հառթուն-Հառթունի, Նախշըվան-Նախշըվանի, Աքուլիս-Աքուլիսի): Ներքին թեքման *ա* հոլովիչը պահպանվել է միայն *տուն*, *շուն* բառերում (տուն-տան, շուն-շան), սակայն՝ *սուն-սունի*, *ծուն-ծունի*: Ժամանականիշ բառերը ընդհանուր առմամբ հոլովվում են *վա* հոլովմամբ (օր-օրվա, կըշեր-կըշերվա, վախտ-վախտվա, ծըմեռ-ծըմեռվա):

Բացառականը կազմվում է *ից* վերջավորությամբ, գործիականը՝ *օվ*, ներգոյականը՝ *ըմ* (կուղ-կուղից(ը)-կուղօվ(ը)-կուղըմ(ը), կըճուճ-կըճուճից(ը)-կըճուճօվ(ը)-կըճուճըմ(ը), օրօրօցներ-օրօրօցներից(ը)-օրօրօցներօվ(ը)-օրօրօցներըմ(ը): Բոլոր հոլովները, բացառությամբ սեռականի, ստանում են որոշիչ հոդ:

Բայն ունի երկու լծորդություն՝ *ալ* (կառթալ, կընալ, աղալ, էրէվալ, զարմանալ, թուլանալ) և *էլ* (խըմէլ, մըտնէլ, տէսնէլ, պըռնէլ, նըստէլ, կատաղէլ):

Հոլովման համակարգում էական (օժանդակ) բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքը արտահայտվում է *ա*-ով (*Էնի լավ մառթ ա*, *Էրէխան հիվանդ ա*), սակայն անցյալ ժամանակը կազմվում է *էր* բառ-մասնիկի բաղադրությամբ (*էս էմ էր*, *տուի էս էր*, *էն(ի) էր*, *մէնք էնք էր*, *տուիք էք էր*, *ընդրանք էն էր*):

Համանման կազմություն ունեն նաև բայի բոլոր եղանակների անցյալի ձևերը (*խօսըմ էմ էր* («խոսում էի»), *մընըմ էնք էր* («մընում էինք»), *կառթամ էր* («կարդայի»), *կըկառթամ էր* («կկարդայի»), *պըտի կառթաս էր* («պիտի կարդայիր»), *կառթալու էնք էր* («կարդալու էինք»), *կառթացել էմ էր* («կարդացել էի») և այլն): Այս հատկանիշը շրջակա բարբառներից հատկապես բնորոշ է Խոյ-Սալմաստի խոսվածքներին, որոնք կրողների լեզուն իր ազդեցությունն է թողել քաղաքի խոսվածքի վրա¹²: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ հատկանիշը բնորոշ է նաև Հյուսիսային Գողթնի խոսվածքներին¹³, ինչպես նաև Սյունիք-Արցախի բարբառների նախիջևան-

¹² Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ 96-135:

¹³ Ա. Վարդանյան, Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե., 2021, էջ 35-38:

յան խոսվածքներին¹⁴, հնարավոր ենք համարում, որ սա տեղական խոսվածքի հին հատկանիշ կարող է լինել:

Ե խոնարհման պարզ բայերի անցյալի ձևերը նույնպես շեղվում են Արարատյան բարբառից՝ ներգործաձևի փոխարեն (*սիրեցի*, *լսեցի*) կրավորաձև՝ *սիրամ*, *սիրար*, *սիրավ*, *լրսանք*, *լրսաք*, *լրսան*, *ծախամ*, *ծախար*, *ասավ*, *ասանք* և այլն: Համանման կազմություն ունեն նաև պատճառական բայերի անցյալի ձևերը՝ *լօղացրամ*, *լօղացրար*, *լօղացրավ*, *լօղացրանք*, *լօղացրաք*, *լօղացրան* և այլն: Այս հատկանիշը բնորոշ է ոչ միայն Խոյի, Թավրիզի¹⁵ բարբառներին, այլև Գողթն գավառի և շրջակա խոսվածքներին¹⁶:

Բառագիտական դիտարկումներ

Խոսվածքի հետաքրքիր առանձնահատկություններից է որոշ բառերի՝ տարբեր բարբառներից փոխառված հոմանիշների առատությունը՝ քաղաքում գործածված խոսվածքների փոխազդեցության արդյունքում:

Օրինակ՝ *կողմ* բառի իմաստն են արտահայտում թե՛ Խոյի բարբառին բնորոշ *կօլ* ձևը, թե՛ Թավրիզի բարբառին բնորոշ *թյւ-րյւֆ* ձևը և թե՛ Արարատյան բարբառին բնորոշ՝ փոխառյալ *յան* ձևը; *գազաթ* բառի իմաստն են արտահայտում *կըլօխ*, *կատար*, *քյւլլյւ* ձևերը; *հարևան* բառի իմաստն են արտահայտում թե՛ *հարէվան* և թե՛ փոխառյալ *կօնշու* (թրք. բրբ.՝ գոնշս) ձևերը; *ամուր՝ պինդ* և *մօկկյւմ* (պրս.՝ محکم mohkam («ամուր, պինդ»); *քեռի՝ քէռի* և *դայի* (պրս.՝ دای دāyi («քեռի»); *որսորդ՝ վօսուկան* և *ավյի* (թրք.՝ avcı («որսորդ»); *աղանձ՝ աղանձ* և *կավըրգա* (թրք.՝ kavurga («բոված հա-

¹⁴ Ա. Վարդանյան, *Արցախ-Սյունիքի խոսվածքներ Նախիջևանի տարածքում*. – «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիդուսիսա-րևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութեր» ժողովածու, Ե., 2022, էջ 243-244:

¹⁵ Հ. Աճառեան, *Հայ բարբառագիտություն*. – Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Սոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 64:

¹⁶ Ա. Վարդանյան, *Հյուսիսային Գողթնի միջբարբառը*, էջ 35-36:

տիկեղեն, աղանձ») ձևերը, *դանդուն* ունի ոչ միայն Արարատյան բարբառի բառապաշարին բնորոշ *տանդուն* (<դանդուն) ձևը, այլև Հյուսիսային Գողթնի միջբարբառին բնորոշ *փանդառան* ձևը; ընկույզը՝ *պօպօք* և *կօզ* (<ընկույզ): Վերջինս, կարծում ենք, հին հայերենյան ձևից անխաթարորեն ամփոփված ձև է, ինչպես, օրինակ, հարևան Ճահուկ-Վայքի միջբարբառում առկա *այք* (<այգողք), Դառանջ (<Տեառնընդառաջ) և այլ բառերը¹⁷:

Խոսվածքում տարբեր բարբառներից փոխառված հոմանիշների նման առատությունը նույնպես վկայում է, որ գործ ունենք խառը (անցումային) խոսվածքի հետ:

Եզրակացություն

Այսպիսով՝ անցյալում Հայաստանի մշակութային, տնտեսական, քաղաքական նշանավոր կենտրոններից մեկը եղած և բազմիցս բնակչության զանգվածային տեղաշարժերի ենթարկված Նախիջևան քաղաքը 19-րդ դարում՝ 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրին հաջորդող տարիներին՝ կրկին հայաշատ դառնալուց հետո, նրա խոսվածքը ձևավորվել է ոչ միայն Արարատյան բարբառը կրող տեղաբնիկների, այլև Խոյ-Սալմաստից, Թավրիզից, Գողթն գավառի և շրջակա այլ գյուղերից քաղաք տեղափոխված բնակիչների խոսվածքների հիմքով:

Ընդհանուր առմամբ ունենալով Արարատյան բարբառի հատկանիշներ, բարբառների փոխազդեցությամբ պայմանավորված՝ խոսվածքը ձեռք է բերել Խոյի, Թավրիզի բարբառների, Հյուսիսային Գողթնի միջբարբառի հնչյունաբանական, ձևաբանական և բառագիտական որոշ հատկանիշներ: Այս առումով՝ Նախիջևանի խոսվածքը առավելապես կարելի է համարել խառը (անցումային) խոսվածք:

¹⁷ Ա. Վարդանյան, *Հինհայերենյան իրողություններ Նախիջևանի տարածքի բարբառներում*. – «Լեզու և խոսք» էլեկտրոնային հանդես, 1-2, 2022, էջ 67-69:

Հավելված**Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը Նախիջևան քաղաքի խոսվածքով¹⁸****Սութասանը**

Ընրմ ա, չի ըլնրմ՝ մի թաքավոր: Էս թաքավորը իրա յերգրրի մէջը խնքնար ա անրմ. «Օվ ընէնց սութ ասի, վոր յէս ասէմ՝ սութ ա, իմ թաքավորութունիս կ'էսը կըտամ ընդըրան»:

Մի չօբան ա կալի: Ասըմ ա.

– Թաքավորն արբած կ'էնա, իմ հերըս մի դնգաննագ ունէր, վոր ըստէղից մէկնրմ էր, էրկընքըմը աստըղները խառնըմ էր:

– Կըպատահի,– ջուղաբ ա տալի թաքավորը:– Իմ պապըս էլ մի չիբուխ ունէր. մի ծէրը պէրանին էր տընըմ, էն մի ծէրը մէկնրմ էր արեվիցը վառըմ:

Սութասանը կըլօխը քօրէլօվ տոնս ա կալի:

Մի դնոզի ա կալի: Ասըմ ա.

– Նէրէդութուն, թաքավոր, յէս շուտ պըտի կայիմ, ուշացամ: Էրէկ շատ անձըրէվ էկավ, կ'էծակները տըրաքան, էրկ'ինքը ճըղվավ, կընացէլ էմ էր կըրկատէլու:

– Հա, լավ էս արէլ,– ասըմ ա թաքավորը,– ամա լավ չէս էր կարկատէլ. էս առավօտ մի քիչ անձըրէվ թափավ:

Էս էլ ա տոնս կալի:

Մէջիօլ ա մըտնըմ մի քնսիբ կ'էղացի, չափը կըռնատակ'ին:

– Տու ի՞նչ էս ուզըմ, ա՛յ մառթ,– հառցընըմ ա թաքավորը:

– Ինձ մի չափ վօսկ'ի էս պառտք, էկ'էլ էմ տանէմ:

– Մի չափ վօսկ'ի,– զարմանըմ ա թաքավորը:– Սութ էս ասըմ, յէս քէգ վօսկ'ի չէմ պառտք:

– Թէ վոր սութ էմ ասըմ, թաքավորութունիտ կ'էսը տուր:

– Չէ, չէ, դո՛ւզ էս ասըմ,– խօսքը փօխըմ ա թաքավորը:

¹⁸ Գրանցել ենք 1987թ., բարբառախոս՝ Հերիքնագ Մեհրաբյան:

– Դիւզ էմ ասըմ՝ մի չափ վօսկի՛ն տուր:

Օգտագործված գրականություն

- Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893:
 Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն.– Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911:
 Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Ե., 1977:
 Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962:
 Աստուածաշունչ, Կոստանդնուպոլիս, 1896:
 Բուզանդ Փ., Պատմութիւն հայոց, Ե., 1987:
 Խորենացի Մ., Պատմութիւն հայոց, Ե., 1981:
 Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1991, հ. 3:
 Հյուբշման Հ., Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907:
 Զանյան Մ., Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1784, էջ 52-60:
 Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
 Վարդանյան Ա., «Նախիջևան» տեղանվան ստուգաբանության շուրջ.- Գ.Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2017:
 Վարդանյան Ա., Արցախ-Սյունիքի խոսվածքներ Նախիջևանի տարածքում.- «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսա-րևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութեր» ժողովածու, Ե., 2022:
 Վարդանյան Ա., Հինհայերենյան իրողություններ Նախիջևանի տարածքի բարբառներում.- «Լեզու և խոսք» էլեկտրոնային հանդես, 1-2, 2022:
 Վարդանյան Ա., Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե., 2021:
 Josephus F., Antiquitates Judaicae, I.92.
 Варданян А., Зов Вишапасара, Ереван, 2010.
 Минорский В., Истоия Ширвана и Дербенда IX-XI веков, М., 1963.

Համառոտագրություններ

արաբ. – արաբերեն

բրբ. – բարբառային

թրք. – թուրքերեն

պրսկ. – պարսկերեն

Vardanyan Artak - The Subdialect of City Nakhijevan.- The ancient written form of the Armenian toponym *Nakhijevan* is *Նախնաւան Naxčavan*, from which, according to traditional etymology, the form *Նախիջևան Naxijevan* (“the first refuge” of Noah) originated. However, the materials of local dialects do not exclude the version that the original form is *Նախիջևան*, and *Նախնաւան* is its modified form (like աղջիկ *aļjik* (“girl”) > *ախնիկ axčig*, աղսան *ałc’an* (“salad”) > *ախսան ahcan*, etc.).

The city of Nakhijevan, which in the past was one of the prominent cultural, economic and political centers of Armenia, was repeatedly subjected to mass displacements of the population. In the 19th century, after the Turkmenchan Treaty of 1828, its population again became predominantly Armenian, and the dialect of the city was formed from the speech of the old-timers, who spoke the Ararat dialect, and from the dialects of those who migrated from Khoya, Salmast, Tabriz, as well as from the Gokhtn province and other surrounding areas. villages of Nakhijevan.

Mainly having the features of the Ararat dialect, as a result of the interaction of dialects, the language acquired some phonetic, morphological and lexical features of the Khoy and Tabriz dialects, as well as the Northern Goghtn interdialect. Therefore, the speech of the city of Nakhijevan can be considered a mixed (transitional) subdialect.

Keywords: Nakhijevan subdialect, Ararat dialect, Khoy dialect, Tabriz dialect, Astapat dialect, mixed subdialect.

Artak Vardanyan, PhD in Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Варданян Артак- Говор города Нахиджевана.- Древняя письменная форма армянского топонима *Нахиджеван* – *Նախիվանի* *Naxčavan*, от которой, согласно традиционной этимологии, произошла форма *Նախիջևանի* *Naxijevan* ("первое пристанище" Ноя). Однако материалы местных диалектов не исключают версию, что первоначальной является форма *Նախիջևանի*, а *Նախիվանի* – ее видоизмененная форма (как *սղըրիկ* *ałjik* ("девушка") > *սղիվիկ* *axčig*, *սղըան* *alc'an* ("салат") > *սղիվանի* *axsan* и т.д.).

Город Нахиджеван, в прошлом являвшийся одним из видных культурных, экономических и политических центров Армении, неоднократно подвергался массовым перемещениям населения. В XIX веке, после подписания Туркменчайского договора 1828 г., его население вновь стало преимущественно армянским, а говор города формировался из речи старожилов, говорящих на араратском диалекте, и из говоров переселившихся из Хоя, Салмаста, Тебриза, а также из Гохтнской губернии и других окрестных деревень Нахиджевана.

Имея в основном черты араратского диалекта, в результате взаимодействия диалектов говор приобрел некоторые фонетические, морфологические и лексические черты хойского и тебризского диалектов, а также междиалекта Северного Гохтна. Следовательно, говор города Нахиджевана можно считать смешанным (переходным) говором.

Ключевые слова: нахиджеванский говор, араратский диалект, хойский диалект, тебризский диалект, астапатский говор, смешанный говор.

Варданян Артак, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

«ՎԱԽԵՆԱԼ, ԽՐՏՆԵԼ» ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

DOI:10.54412/2738277X-2023.1.19-83

Զաքարյան Հովհաննես

բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» ԳԿՀ, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար,
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. հայոց լեզու, հնդեվրոպական նախալեզու, սկզբնահնչյուն, աճական, ձայնդարձ, ածանց, սահող s:

Նախաբան

Հոդվածը նվիրված է հ.-ե. *sk'ei- «ցայտել; ցատկել» պարզական արմատից անմիջականորեն սերված հայերեն մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը, որոնք ունեն «վախենալ, խրտնել» և հարակից իմաստներ: Այդպիսի բառերից մի քանիսը ստուգաբանված են (տե՛ս ստորև) և տեղ են գտել գիտական աղբյուրներում: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ իմաստներով դեռևս կան նույնարմատ չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված բառեր: Դրանց հայտնաբերումն ու ստուգաբանությունը կամ վերջինիս ճշգրտումը կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով:

Հայերենում «վախենալ, խրտնել» իմաստներով կան մի շարք հոմանիշ բառեր (*խրտնուլ- խլշել-շրտնուլ -սարտնուլ- հարթնուլ- խնդկել, խնդկի տալ- խնդռուզի տալ- խայտալ, խրտուիլակ- խուճ-*

* Ներկայացվել է 09.04.2023, գրախոսվել՝ 18.05.2023:

խունճկուլուլու- ճոլի, խուճապ- սոռոթայ- շրփոթ, սարսել- սարսափել -շարշափել -գարգանդել-սոստփիլ -սոսկալ - սաւառնել «երկյուղել» և այլն), որոնց արմատները նաև հնչյունապես աղերսվում են միմյանց՝ տարբերվելով ածանցներով, ածականներով, ձայնդարձի աստիճաններով, բաղաձայնական օրինաչափ հերթագայություններով, շեշտափոխական և փոխազդեցական հնչյունափոխություններով, սակայն մինչ այժմ առկա բառարաններում ու գիտական գրքերում բխեցվել են հաճախ միանգամայն տարբեր ու տարասեռ աղբյուրներից: Մույն հոդվածի խնդիրներից են հոմանիշային շարքեր կազմող այդ բառերի միջև ծագումնաբանական համակարգային կապեր հայտնաբերելը և հ.-ե. նույնական սկզբնաձևերից բխեցնելը:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. *sk'ei- «ցայտել; ցատկել» պարզական արմատը գիտական աղբյուրներում ներկայացված է տարբերակներով՝ № 1721, *(s)kek-, *skeg- «ցատկել, արագ շարժվել», № 1727, *(s)k'el «ցատկել», № 1728, *skhel- «սայթաքել», № 1736, *(s)ker-2, *skerə-, *skrē- «ցատկել, շրջվել», № 1745, *skēt-: *skət- «ցատկել», № 1751, *skēu-5 «նետել, կրակել, շտապել», № 1754, *skeub-, *skeubh-, *skeug- «շարժվել; նետել, կրակել», № 1756, *(s)keud-2 «նետել, կրակել» (Պոկ.¹), *skand- «վազել, ցատկել, բխել», *skat- «ցատկել, ցայտել, ժայթքել», *(s)kerəd- «ցատկել, կայթել, պարել», *skek- «վազել, ցատկել», *(s)krey- «շարժել, ցնցել, շուրջը թռչել», *skūbh- «հրել, քշել, վարել, շարժել», *(s)keud- «վարել, հետապնդել, շտապել» (Նիկ.²), *sk'ē-r- «ցատկել» (ՀԱԲ³, 4, 456-457, ՀԱԲ⁴, 743, ցիբ, Աղաբ.⁵, 125), *sk'ələq-

¹ J. Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 2005. - <http://dnghu.org/indoeuropean.html> (այսուհետև՝ Պոկ.):

² S. Nikolaev, *Database of Indo-European etymology*. - <http://starling.rinet.ru/> (այսուհետև՝ Նիկ.):

³ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁴ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետև՝ ՀԱԲ):

թաց; ցողել; ցայտել» (Աղ.⁶, 152), *skhē-t- <*skh₂t- «ցատկել, ցայտել» (Օլսեն⁷, 207, ՎԲԱ⁸, շիթ), *sk'ə-t- «ցատկել, ցայտել» (Մարտ.⁹, 623-624, ցայտ) ևն: Այս բոլորն ընդհանրացնող բնիմաստն է՝ «շարժվել, ընթանալ»:

Նշված աղբյուրներում առկա են այդ արմատից առաջացած հայերեն մի շարք բառեր. *խիրտ*- «վախեցած» (որից՝ *խրտնուկ*, *խրտչիկ*, բրբռ. *խոնել*, *խոպել*, *խրտել* «վախից վեր ցատկել՝ ծուլ լինել», բրբռ. *խրչան*, *խրտան*, *խրտնուկ*, *խրտլուկ*, *խրտնկոտ* «խլբրտնող երկչոտ», *խրտուիլակ* (բրբռ. *խրտիչ*) «վախեցնող խամաճիկ») <*khēr-d-՝ *(s)ker-(d)- (ՀՄԲ, 332), *խրխշել* (*խրշել*, *խլշել*, *խշշել*, *խլրշ-կոտել*) «խրտնել» կրկնավոր <*(s)khēr-skh-՝ *(s)ker- (ՀՄԲ, 355), *շրրտնուկ* «1. խրտնել, վախենալ, 2. շվարել, շփոթվել, շշկվել, 3. շլանալ, աչքերը մթնել» <*skhēr-d-՝ *(s)ker-d- (ՀՄԲ, 597), *խուճ* (*խունջ*, *խուճիճ*, *խոճիճ*, *խունչակ*, *խնջակ*, *խունչուլան*, բրբռ. *խոխոջ*) «խրտվիլակ, վախեցնող խամաճիկ, արտի պահապան» <*khudio-՝ *(s)keu-d- (ՀՄԲ, 348), *ցիր* «սփռված, ցրիվ» <*sk'ē-r- (ՀՄԲ, 4, 456-457, ՀՄԲ, 743, ՀԼՊ¹⁰, 148, Աղաբ., 125), *ցատկել* «ոստնել» <*sk'ə-t-l- (ՀՄԲ, 4, 633, Աղաբ., 123-129), *ցայտ* (*ցաթ*, *ցեթ*) «ցալքուն, շիթ, կաթիլ» <*sk'ə-t- (ՀՄԲ, 4, 449, ՀՄԲ, 741, Մարտ., 623-624), *շիթ* (*շիտ*) «1. ցայտ, 2. կաթիլ» <*skhē-t(h) (ՀՄԲ, 587, Օլսեն, 207, ՎԲԱ), *շիռ* «լի, առատ» (որից՝ *արբշիռ*, *շոայլ*) <*skhē-r-s- (ՀՄԲ, 588), *ցանել* «1. շաղ տալ,

⁵ Մ. Աղաբեկյան, *Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր*, Ե., 2017 (այսուհետև՝ Աղաբ.):

⁶ Է. Աղայան, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974 (այսուհետև՝ Աղ.):

⁷ Birgit Anette Olsen, *The noun in Biblical Armenian: origin and word-formation: with special emphasis on the Indo-European heritage* (Trends in linguistics. Studies and monographs; 119), Berlin, New York: Mouton de Gruyter, 1999 (այսուհետև՝ Օլսեն):

⁸ Wiktionary. - <https://en.wiktionary.org/wiki> (այսուհետև՝ ՎԲԱ):

⁹ H. Martirosyan, *Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, Brill, 2008 (այսուհետև՝ Մարտ.):

¹⁰ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987 (այսուհետև՝ ՀԼՊ):

սփռել, 2. ցողել, ցայել» <*sk'ə-n- (Աղաբ., 125), *սանդուղ (սանդուխ)* «ելարան» <*(s)k'a-n-d- (ՀԱԲ, 4, 173, ՀՄԲ, 667, Օլսեն, 951, ՎԲԱ) ևն:


2020 և 2021 թթ. լույս տեսած մեր երկու հոդվածներում առաջարկել ենք այս շարքին հավելել մի շարք բառեր, որոնց թվում են հետևյալները. *ծուլ* «ցատկ» (որից՝ *ծլիլ* «վախենալ») <*sk'hō-l-, *կայթ* «ցատկոտոց, ցնծության պար» <*(s)kəi-t-, *կայտ* «1. առույգություն, եռանդ, 2. ուրախություն, 3. ցատկոտուք» (որից՝ *կայտառ, կայտիռ, կայտոռել*) <*(s)kəi-d-, *խայտալ* «1. ցատկոտել, թռչկոտել, կայտոռել, ուստոստել, տրտինգ տալ, 2. ցնծալ, հրճվել, ուրախանալ» <*(s)khəi-d-, *ցնծալ* «հրճվել, խայտալ» <*gnūd- <*sk'ō-n-g'-, *ճայթել* «1. պայթել, 2. ճաքել, ճեղքվել, կոտրվել, 3. շաչել, 4. կայթել, խաղալ, 5. ցնծալ, 6. ցատկոտել, թռչկոտել» <*sk'həi-t-, *ժայթքել* «1. ուժգին դուրս մղել, արտավիժել, 2. թափով բխել, 3. փսխել, 4. պոռթկալ» <*sk'wəi-t-p- ևն (Զաք.-2020¹¹, էջ 65-76), *ցողել (ցաղել)* «1. ցայել, ջուր ցանել՝ շաղ տալ, 2. թեթև անձրևել, շաղել» <*sk'əu-l-, *ցփնել* «1. ցողել, ցայել, ցնցղել, ցրցամ տալ, սրսկել, 2. շաղ տալ, սփռել, ցրել, 3. շպրտել, նետել, դեն նետել, 4. շռայլել, ծախսել, վատնել» <*sk'ō-ph-, *շաղ* «1. ցող, 2. խոնավություն, թացություն, 3. շիթ, կաթիլ, 4. ցրում, 5. շփոթ» (որից՝ *շաղել* «1. բարակ անձրևել, 2. խառնել», *շաղ տալ* «1. ցրել, 2. ցանել, 3. ցողել, 4. ամփեղցփեղ խոսել», *շաղախ* «թաց խառնուրդ, ցեխ») <*skhə-l- ևն (Զաք.-2021¹², էջ 126-137):

Իմաստային այս առերևույթ բազմազանության մեջ օրինաչափություններ գտնելու և իմաստային անցումները համակարգված ներկայացնելու նպատակով կազմել ենք գծապատկեր՝ իմաստային զարգացման շրջված ծառի տեսքով: Այս իմաստները դուրս են բերված վերոհիշյալ աղբյուրներից: Իմաստային անցում-

¹¹ Հ. Զաքարյան, «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն. - «Ջահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, խմբ. Վ. Կատվայան, Ե., 2020 (այսուհետև՝ Զաք.-2020):

¹² Հ. Զաքարյան, «Շառափ, ցողել, ծորալ» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն. - «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (16), խմբ. Վ. Կատվայան, Ե., 2021 (այսուհետև՝ Զաք.-2021):

ները մերթ արմատային տարբերակների ու դրանց ածանցյալների միջև են (միջբառային անցումներ), մերթ առանձին բառերի տարբեր իմաստների միջև (ներբառային անցումներ): Սա անցումների ամբողջ գունապնակը չէ: Բազմաթիվ ավելի մասնավոր անցումներ անտեսված են՝ զծապատկերը չխճողելու համար:



Այս արմատից կարելի է բխեցնել նաև հայ. «վախենալ, խրտնել» և հարակից այլ իմաստներով հետևյալ բառերը. *սարտնուլ, հարթնուլ, խնդկել, խնդուղի տալ, խունճկուլուլու, ճոլի, խուճապ, սարսել, սարսափ, շարշափ, զարզանդ, սոսոփիլ, սոսկալ, սոռոթայ, շրվոթ, սաւառնել «երկյուղել»*¹³: Հ.-ե. արմատի ձայնդարձի տարբեր աստիճաններով, տարբեր աճականներով ու ածանցներով բաղադրված տարբերակներից սերված այս բառերի ստուգաբանությունները կատարված են հայերեն և այլալեզու նույնարմատ գուգահեռների հնչյունական, բառակազմական, իմաստային վերլուծությունների հիման վրա: Հաշվի են առնված նաև հայերեն նյութի բարբառային տարբերակները:

Այդ բառերի վերաստուգաբանությունը կամ ստուգաբանությունն էլ սույն հոդվածի հիմնական նորույթն է:

Անդրադառնանք դրանց հերթականությամբ:

¹³ Հ.-ե. այս արմատի այլալեզու ածանցյալները նույնպես իմաստային բազմաթիվ ճյուղավորումներ ունեն, որոնք ստորև կներկայացվեն հայերեն տարբեր բառերի ստուգաբանության կապակցությամբ:

Մարտնուլ (*սարտչի*) «1. խրտնել, վախենալով փախչել, հարթնուլ, 2. խորշել, հեռանալ, բաժանվել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 192): Գ. Զահուկյանը կասկածով կապել է հ.-ե. *kʰrd-՝ *kʰerd- «սիրտ» արմատի հետ (ՀԼՊ, 132, ՀՄԲ, 673), որ համոզիչ չէ¹⁴: Բայց երբ այս բառը համեմատում ենք դրա վերոհիշյալ *շրտնուլ*, *խրտնել* հոմանիշների հետ, կասկած չի մնում, որ այս երեք բառերը հ.-ե. նույն արմատի տարբերակներ են՝ *u/ʒ/ɦ* հերթագայությամբ և ձայնդարձի տարբեր աստիճաններով: Իսկ քանի որ Գ. Զահուկյանը *շրտնուլ*, *խրտնել* բառերը բխեցրել է հ.-ե. *(s)ker-(d)- «ցատկել, ոստնել» արմատից, ուրեմն մեզ մնում է առաջարկել *սարտ-ն-ուլ* <*(s)kʰer-d-no-<*(s)kʰe-r-<skʰei- «ցատկել, վազել» ստուգաբանությունը, որում *r-ն և *d-ն աճականներ են, *no-ն՝ ածանց¹⁵:

Հարթնուլ (*հարթչիլ*, *արթչիլ*, *խարթնուլ*) «խրտնել, վախենալով վեր ցատկել, փախչել» բառը Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը համարել են հ.-ե. *(s)p(h)er- «թալրտալ, ցնցվել, վեր ցատկել» արմատի ածանցյալ՝ *-th ածանցով (ՀԱԲ, 3, 58, ՀՄԲ, 451, ՀԼՊ, 151), որի դեպքում անբացատրելի է մնում *խարթնուլ* (*խարթուցանել*) տարբերակը: Մինչդեռ վերոհիշյալ *սարտնուլ*, *շրտնուլ*, *խրտնել* բառերի հետ իմաստային և ձևային գրեթե նույնությունը¹⁶ թույլ է տալիս ենթադրելու, որ սրա սկզբնական ձևը *խարթնուլ*-ն է՝ որպես *խրտնել* բառի ձայնդարձային տարբերակ՝ *տ-թ* անցումով (հմմտ. *տապալ* - *թապալ* (*թալալ*), *պատատել* - *փաթաթել*, *տախտ* - *թախթ*): Իսկ

¹⁴ Ի դեպ, Գ. Զահուկյանը ավելի վաղ արձանագրել է *սարտնուլ/խրտնուլ* (ս/խ) հերթագայություն (Գ. Джаукян, *Очерки по истории дописменного периода армянского языка*, Е., 1967, էջ 309 (այսուհետև՝ Ջահ., 1967)):

